

4363


ՀԱՍԿՈՄԿՈՒՄԻՄԻ (Բ)  
ԵՐԱԳԻՐԸ  
ՅԵՎ

— БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ИСТОРИОГРАФИИ  
Академии Наук  
СССР

ЗКП

2-22

ԱԶԵՐՆԵՐ - ԲԱԴՈՒ - 1933



Պրոլետարներ բոլոր յերկնների, Խոհեմայական Հանրապետություն  
1 JUL 2005

Ca 34-И  
581

NOV 2009  
Z-22

ԿԱՄԱԿԻՐԻԹԵՆԱԿԱՆ

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ

ԿՈՒՍԿՑՈՒԹՅԱՆ

(Բայլշեկիների)

ԾՐԱԳԻՐԸ

ՅԵՎ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

◆ КНИГА  
Института  
Востоковедения  
Академии Наук  
СССР

ԱԶԵՐՆԵՐ ԲԱԳՈՒ—1933

7.09.2013

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ.

Համամիութենական կոմմունիստական  
(բոյլշևիկների) կուսակցության ծրագրի  
և կանոնադրության ներկա հրատարա-  
կությունն ամփոփում է կուսակցու-  
թյան ծրագրի բնագիրը՝ հաստատված  
կուսակցության 8-րդ համագումարում  
և կուսակցության կանոնադրության  
բնագիրը՝ հաստատված կուսակցության  
14-րդ համագումարում:

Կուսակցության կանոնադրության փո-  
փոխությունը, վոր մտցված և կուսակ-  
ցության 15-րդ համագումարում (անս  
Համ. Կ. (բ) Կ. 15-րդ համագումարի  
«առանձին կազմակերպչական խնդիրնե-  
րի մասին» վորոշումը՝ Համ. Կ. (բ) Կ.  
15-րդ համագումարի ստենոգրաֆիա-  
կան հաշվետվության մեջ, եջ-1319-  
13:0, 1928 թ. հրատարակ. ոռու.) տր-  
պաղը վորոշում և ներկա գրքույի վեհին  
յերեսներում:

Կուսակցության ծրագրի վերաբեր-  
մամբ՝ 16-րդ կուսակցության կոմ-



56373-66

մունիստական ինտերնացիոնալում Համ.  
Կ. (բ) Կ-ի ներկայացուցիչների հաշվե-  
տը վության աւթիվ՝ հետեւալ վորոշումը  
հանեց. «Համագումարը հանձնարարում  
է Համ. Կ. (բ) Կենտակումին վերամշակել  
կուսակցության ծրագիրը՝ 6-րդ համաշ-  
խարհային կոնգրեսում ընդունված կոմ-  
մունիստական ինտերնացիոնալի ծրագրի  
և ՍԽՀՄ սոցիալիստական շինարարու-  
թյան հաջողությունների համաձայն»:  
(Տես Համ. Կ. (բ) 16-րդ համագումա-  
րի ստենոգրաֆիական հաշվետվությունը  
եջ 723 1931 թ. հրատարակ. ոռուս.):

16-րդ համագումարում կուսակցու-  
թյան կանոնադրության մեջ վոչ մի փո-  
փոխություն չի յեղել մացված:

ՀԱՄԱՐԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄ-  
ՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒ-  
ԹՅԱՆ (Բոյլշևիկների)

## ԾՐԱԳԻՐԸ

(Ընդունած կուսակցության 8-րդ  
համագումարում)

Հոկտեմբերյան հեղափոխու-  
թյունը Ռուսաստանում (25 ն  
հոկտեմբերի—7 նոյեմբերի 1917  
թվի) իրագործեց սրովետարիա-  
տի դիկտատուրան: Զքափոր գյու-  
ղացիության կամ կիսապրոլետա-  
րիատի ոգնությամբ պրոլետա-  
րիատն սկսեց կոմմունիստական  
հասարակության հիմքերը կա-  
ռուցել: Հեղափոխության զար-  
գացման ընթացքը Գերմանիա-  
յում և Ավստրո-Հունգարիայում,

պրոլետարիատի հեղափոխական  
շարժման աճումը բոլոր տռաջա-  
վոր յերկրներում, այդ շարժման  
խորհրդային ձեի տարածումը,  
այսինքն այն ձեի, վորի անմի-  
ջական նպատակն է պրոլետա-  
րիատի դիկտատուրայի իրազոր-  
ծումը,—այս բոլորը ցույց տվեց,  
վոր սկսվել ե համաշխարհային  
պրոլետարական, կոմմունիստա-  
կան հեղափոխության դարաշըր-  
ջանը:

Այդ հեղափոխությունն անխու-  
սափելի արդյունք եր կապիտա-  
լիզմի զարգացման, վորը գեռես  
տիրապետում է քաղաքակիրթ-  
յերկրների մեծ մասում։ Կապի-  
տալիզմի և բուրժուական հասա-  
րակության եյությունը մեր հին  
ծրագիրը ձշորեն—յեթե չհաշ-  
վենք կուսակցության անձիշտ  
առցիալ-դեմոկրատական անունը,

—ընորոշել ե հետեւյալ առաջա-  
դրություններով։

«Այդ հասարակության գլխա-  
վոր հատկանիշն ե ապրանքային  
արտադրությունը՝ հիմնված կա-  
պիտալիստական արտադրական  
հարաբերությունների վրա, վոր-  
տեղ ապրանքների և արտադրու-  
թյան միջոցների շրջանառու-  
թյան ամենից կարեռ և նշանա-  
կալից մասը պատկանում է քա-  
նակով փոքրաթիվ մի դասակար-  
գի։ Մինչդեռ պրոլետարիատը և  
կիսապրոլետարիատը, վոր բնակ-  
չության խոշոր մեծամասնու-  
թյունն է կազմում, իրենց տըն-  
տեսական դրությամբ ստիպված  
են շարունակ կամ պարբերաբ  
վաճառել իրենց բանվորական  
ուժը, այսինքն կապիտալիստնե-  
րի վարձկանը դառնալ և իրենց  
աշխատանքով հասարակության

վերին դաստակարգերի յեկամուտն  
ստեղծել:

«Կապիտալիստական արտա-  
դրական հարաբերությունների  
տիրապետության շրջանն ավելի  
և ավելի յե ընդլայնվում, վորչափ  
տեխնիկայի մշտական կատարե-  
լագործումը՝ բարձրացնելով խո-  
շոր ձեռնարկությունների տնտե-  
սական նշանակությունը, գուրս  
և մղում մանր ինքնուրույն ձեռ-  
նարկողներին՝ նրանց մի մասին  
պրոլետար դարձնելով, մնացած-  
ների դերը սահմանափակելով հա-  
սարակական տնտեսական կյան-  
քում և տեղ տեղ նրանց քիչ թե  
շատ լիակատար, քիչ թե շատ  
բացահայտ, քիչ թե շատ ծանր  
կախման մեջ զնելով կապիտալից:

«Բացի այդ՝ նույն տեխնիկա-  
կան պրոգրեսսը հնարավորու-  
թյուն և տալիս ձեռնարկողներին

միշտ ավելի մեծ չափով կիրառել  
կանանց և յերեխանների աշխա-  
տանքն ապրանքների արտադրու-  
թյան շրջանառության պլոցես-  
սում: Իսկ վորովհետև, մյուս կող  
մից, ձեռնարկողների մոտ նա  
հարաբերաբար նվազեցնում ե  
րանվորական կենդանի ուժի կա-  
րիքը, բանվորական ուժի պա-  
հանջն անհրաժեշտաբար յետ ե  
մնում նրա առաջարկից: Այս պատ  
ճառով ել աճում ե վարձու աշ-  
խատանքի կախումը կապիտալից,  
և բարձրանում ե նրա շահագործ-  
ման աստիճանը:

«Իրերի այս գրությունը բուր-  
ժուական յերկրների ներսում և  
նրանց մշտապես սրվող փոխա-  
դարձ մըցությունը համաշխար-  
հային շուկայում միշտ ավելի ու-  
ավելի յեն դժվարացնում ապ-  
րանքների վաճառքը, վորոնք շա-

բունակ աճող քանակով են արտադրվում։ Գերաբռտադրությունը, — վոր յերևան ե գալիս քիչ թե շատ սուր արդյունաբերական ճգնաժամերի մեջ, վորոնց հետեւմ են արդյունաբերության լճացման (զառօյ) քիչ թե շատ տեսական շրջաններ, — բուրժուական հասարակության արտադրողական ուժերի զարգացման անխուսափելի հետեւանքն եւ ճգնաժամերը և արդյունաբերության լճացման շրջաններն իրենց հերթին ավելի ևս կործանում են մանր արտադրողներին, ավելի ևս ուժեղացնում են վարձու աշխատանքի կախումը կապիտալից, ավելի ևս արագացնում բանվոր գասակարգի գրության հարաբերական, իսկ յերբեմն ել բացարձակ վատթարացումը։

«Եյսպիսով տեխնիկայի կա-

տարելազործումը, վոր աշխատանքի արտադրողականության ավելացումն ու հասարակական հարստության աճումն ե նշանակում, բուրժուական հասարակության մեջ իր հետ միասին առաջ ե բերում հասարակական անհավասարության աճում, ունեորների և չունեորների միջև յեղածտարածության մեծացում և աշխատավոր մասսաների ել ավելի լայն խավերի համար ապրուստի անապահովություն, անգործություն ու բազմատեսակ դրկանքների շատացում։

«Բայց բուրժուական հասարակությանը հատուկ այս բոլոր հակասությունների աճումին ու գարգացմանը համաչափ՝ աճում ե նաև աշխատավոր և շահագործվող մասսայի գժգոհությունը տիրող կարգերից, աճում ե պրոլե-

տարների թիվը ու համերաշխությունը և սրվում ե նրանց պայքարն իրենց շահագործողների զեմ։ Միևնույն ժամանակ տեխնիկայի կատարելագործումը, համակենտրոնացնելով արտադրության և շրջանառության միջոցները և հանրայնացնելով աշխատանքի պրոցեսը կապիտալիստական ձեռնարկություններում՝ ավելի և ավելի արագ նյութական հնարավորություն ե ստեղծում կապիտալիստական արտադրական հարաբերությունները կոմմունիստականով փոխարինելու համար, այսինքն՝ հնարավոր ե դարձնում այն սոցիալական հեղափոխությունը, վորը միջազգային կոմմունիստական կուսակցության՝ վորպես դասակարգային շարժման գիտակից արտահայտչի՝ ամբողջ գործունեյու-

թյան վերջնական նպատակն ե կազմում։

«Փոխարինելով արտադրության և շրջանառության միջոցների մասնավոր սեփականությունը հասարակականով և հասարակական-արտադրական պրոցեսի պլանաչափ կազմակերպությունն մտցնելով՝ հասարակության բոլոր անդամների բարեկեցությունըն ու բազմակողմանի զարգացումն ապահովելու համար՝ պըունկարիատի սոցիալական հեղափոխությունը կվոչնչացնի հասարակության դասակարգային բաժանումը և դրանով կազմատագրի ձնշված ամբողջ մարդկությունը, քանի վոր վերջ կդնի հասարակության մի մասը մյուսի կողմից հարստահարելու բոլոր ձեւերին։

«Սոցիալական այս հեղափո-

խության անհրաժեշտ պայմանը  
պրոլետարիատի դիկտատուրան  
է. այսինքն պրոլետարիատի ձեռ-  
քով քաղաքական մի այնպիսի  
իշխանություն նվաճելը, վոր նը-  
րան հնարավորություն կտա ճըն-  
շելու շահագործողների ամեն մի  
դիմագրություն։ Նպատակ դնե-  
լով իրեն՝ ընդունակ զարձնել  
պրոլետարիատին իրագործելու  
պատմական իր մեծ կոչումը, մի-  
ջազգային կոմմունիստական կու-  
սակցությունը կազմակերպում ե  
նրան վորպես բոլոր բուրժուա-  
կան կուսակցություններին հա-  
կագիր ինքնուրույն քաղաքական  
կուսակցությունն, ղեկավարում ե  
նրա բովանդակ պայքարը, մեր-  
կացնում նրա առջև շահագործող  
ների և շահագործվողների շահե-  
րի անհաշտ հակազրությունը և  
պարզաբանում ե նրան առաջիկա

սոցիալ ական հեղափոխության  
պատմական նշանակությունն ու  
անհրաժեշտ պայմանները։ Դրա  
հետ միասին՝ նա յերեան և հա-  
նում մնացած աշխատավոր և շա-  
հագործվող վողջ մասսայի առջև  
նրա գրության անհուսալիու-  
թյունը կապիտալիստական հա-  
սարակության մեջ և սոցիալա-  
կան հեղափոխության անհրաժեշ-  
տությունը հանուն նրա սեփա-  
կան ազատագրման կապիտալի  
ճնշումից։ Բանվոր դասակարգի  
կուսակցությունը՝ կոմմունիս-  
տական կուսակցությունը դեպի  
իր շարքերն ե կոչում աշխատա-  
վոր և շահագործվող բոլոր խա-  
վերին, վոր չափով նրանք պրո-  
լետարիատի տեսակետի վրա յեն  
կանգնում»։

Կապիտալի համակենտրոնաց-  
ման և կենտրոնացման պրոցե-

սը, վոչնչացնելով ազատ մրցումը, XX դարի սկզբին հանգեց կապիտալիստների հղոր մենաշնորհային միությունների՝ սինդիկատների, կարտելների, տրեստների կազմակերպման, վոր վըճռական նշանակություն ստացավ ամբողջ տնտեսական կյանքում, միախառնեց բանկային և արդյունաբերական կապիտալը, տհագին չափերով համակենտրոնացրեց կապիտալը և զարկ տվեց կապիտալի ուժգին արտահանմանը դեպի ոտար յերկրներ։ Տրեստներն՝ ընդգրկելով կապիտալիստական պետությունների ամբողջ խմբեր, ձեռնարկեցին աշխարհի տնտեսական վերաբաժանմանը, վորն ամենահարուստ յերկրների միջև տերրիտորիալ գըծով արդեն իսկ բաժանված եր՝ ֆինանսական կապիտալի այդ

դարաշրջանը, վոր կապիտալիստական պետությունների միջև մղվող պայքարին անխուսափելիորեն ավելի սուր բնույթ ե ֆաւլիս, իմպերիալիզմի դարաշրջանն է։

Այստեղից անխուսափելիորեն բրդիսում են իմպերիալիստական ֆալատերազմներ, ոլատերազմներ ովաճառաշուկաների, կապիտալի գործադրության շրջանների, հումնյութերի և բանվորական ուժի համար, այսինքն՝ համաշխարհային տիրապետության և մանրու թույլ ժողովուրդների վրա իշխելու համար։ Հենց այդպիսի բնույթ ունի 1914.-18 թ. թ. առաջին մեծ իմպերիալիստական պատերազմը։

Յեվ համաշխարհային կապիտալիզմի զարգացման տափագանգիքը բարձր աստիճանում ներհանդարան է 1914. ՏՕԸ. Բնակչություն ՏԵՍԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

պես, և ազատ մրցման փոխարիծ-  
նումը պետական մենաշնորհային  
կապիտալիզմով, և արդյունքնե-  
րի արտադրության ու բաշխման  
պրոցեսի հասարակական կար-  
գավորման ապագարատ ստեղծվե-  
լը բանկերի, այլև կապիտալիստ-  
ների միությունների միջոցով,  
և կապիտալիստական մենաշնորհ-  
ներին հետևող թանգության աճ-  
ման ու սինդիկատների աճող  
ձնշումը բանվոր դասակարգի  
վրա, սրա ճորտացումն իմպերի-  
ալիստական պետության միջո-  
ցով, պրոլետարիատի տնտեսա-  
կան և քաղաքական պայքարի  
ահազին դժվարացումը, և իմպե-  
րիալիստական պատերազմի ծանր  
թշվառությունների ու վլուզումի  
արսափները, — այս ամենն ան-  
խուսափելի յե դարձրել կապի-  
տալիզմի կործանումը և նրա փո-

խանցումը հասարակական տըն-  
տեսության մի ավելի բարձր  
տիպարի:

Իմպերիալիստական պատերազ-  
մը չեր կարող վերջանալ վոչ մի-  
այն արդար հաշտությամբ, այլեւ  
ընդհանրապես բուրժուական կա-  
ռավարությունների միջև կնքած  
քիչ թե շատ կայուն խաղաղու-  
թյան դաշնագրով: Կապիտալիզ-  
մի զարգացման արդի աստիճա-  
նի վրա նա անխուսափելիորեն  
վերածվեց և վերածվում է մեր  
աչքի առաջ շահագործվող աշխա-  
տավոր մուսսաների և նրանց գը-  
լուխն անցած պրոլետարիատի  
շաղաքացիական պատերազմի  
ընդդեմ բուրժուազիայի:

Պրոլետարիատի աճող գործը  
և մանավանդ նրա հազթություն-  
ներն առանձին յերկրներում, ու-  
ժեղացնում են շահագործողների

Դիմագրությունը և առաջ են բերում կապիտալիստների միջազգային միության նոր ձևեր (Ազգերի Լիգա և այլն): Համաշխարհային մասշտաբով կազմակերպելով յերկրագնդի բոլոր ժողովուրդների սիստեմատիկ շահագործումը, կապիտալիստների այդ միությունները նախ և առաջ բոլոր յերկրների պրոլետարիատի հեղափոխական շարժումների անմիջական ճնշման գործին են ձեռնարկում:

Առան ձին պետությունների ներսում այս բոլորն անխուսափելիորեն միացնում են քաղաքացիական կոիվը թե պաշտպանող պրոլետարական յերկրների և թե իմպերիալիստական պետությունների լծի տակ ճնշվածողովուրդների հեղափոխական պատերազմների հետ:

Խաղաղության, կապիտալիզմի տիրապետության ներքո միջազգային զինաթափման, միջնորդդատարանների և այլն նշանաբաններն այս պայմաններում վոչ միայն ուսակցիոն ուստոպիա յեն, այլև աշխատավորներին խարելու միջոց, վորով կապիտալիստները ձգտում են զինաթափել պրոլետարիատին և նրան հեռու պահելիր շահագործողներին զինաթափելու գործից:

Միայն պրոլետարական կոմմունիստական հեղափոխությունը կարող է հանել մարդկությունն իմպերիալիզմի և իմպերիալիստական պատերազմների ստեղծած անել կացությունից: Ինչ գժվարությունների յել հանդիպի հեղափոխությունը, ինչքան հնարավոր լինեն նրա ժամանակավոր անհաջողությունները կամ հակա-

հեղափոխական հարվածները —  
պըոլետարիատի վերջնական հաղ-  
թությունն անխուսափելի յի:

Համաշխարհային պըոլետարա-  
կան հեղափոխության այդ հաջո-  
դությունը պահանջում է առա-  
ջազոր յերկրների բանվոր դասա-  
կարգի լիակատար համերաշխու-  
թյունը, ամենասերտ յեղբայրա-  
կան միությունը, հեղափոխական  
գործունեյության ըստ կարելույն  
ամուր միասնականությունը:

Այդ պայմաններն անիրազոր-  
ծելի յեն, յեթե սկզբունքորեն և  
վճռականապես չխզվեն կապերը  
և անխնա պայքար չմղվի սոցի-  
ալիզմի այն բուրժուական խեղա-  
թյուրման հետ, վոր հաղթանա-  
կել ե պաշտոնական սոցիալ դե-  
մոկրատական և սոցիալիստական  
կուսակցությունների վերին շեր-  
տերում:

Այսպիսի խեղաթյուրում ե մի  
կողմից ոպպորտյունիզմի և սո-  
ցիալ-շովինիզմի հոսանքը — խոս-  
քով՝ սոցիալիստական, գործով՝  
շովինիստական հոսանք, սեփա-  
կան ազգային բուրժուազիայի  
թալանչիական շահերի պաշտպա-  
նության քողարկումը հայրենի-  
քի պաշտպանության կեղծ լո-  
գունգով, ինչպես առհասարակ,  
նույնպես և հատկապես 1914—  
1918 թ. թ. իմպերիալիստական  
պատերազմի ժամանակ։ Այս հո-  
սանքն ստեղծվել ե շնորհիվ նրա,  
վոր առաջավոր կապիտալիստա-  
կան պետությունները կողոպտե-  
լով գաղութային և թույլ ժողո-  
վուրդներին՝ հնարավորություն  
են տալիս բուրժուազիային այդ  
կողոպուտից ստացվող գերշահի  
հաշվին արտոնյալ վիճակի մեջ  
դնելու և դրանով կաշառելու պը-

բոլետարիատի վերին շերտերին, խաղաղ ժամանակներում ապահովելու նրանց տանելի քաղքենիական գոյությունը և իր մոտ ծառայության վերցնելու այդ շերտերի ղեկավարներին։ Ոպպորտյունիստներն ու սոցիալ շովինիստները սպասավորելով բուժուազիային՝ պրոլետարիատի դասկարգային ուղղակի հակառակորդներն են, մանավանդ այժմ, յերբ նրանք կապիտալիստների հետ միացած, զինված ձեռքով ձնշում են պրոլետարիատի հեղափոխական շարժումը ինչպես իրենց, նույնպես և ոտար յերկըրներում։

Մյուս կողմից սոցիալիզմի բուժքուական խեղաթյուրումներն ե «կենտրոնի» հոսանքը, վոր հավասարապես յերեան և գալիս բոլոր կապիտալիստական յերկըր-

ներում, սա տատանվում ե սոցիալ-շովինիստների և կոմմունիստների միջև, միություն պահապանելով առաջինների հետ և փորձ անելով վերականգնել սնանկացած 2 րդ ինտերնացիոնալը։ Պրոլետարիատի ղեկավարը նրա ազատության համար մղվող պայքարում նոր 3 րդ կոմմունիստական ինտերնացիոնալն ե, վորի վնդերից մեկն է Համ. կոմ. կուսը։ Այս ինտերնացիոնալը փաստորեն ստեղծվել ե մի շարք յերկըրների, մանավանդ Գերմանիայի նախկին սոցիալիստական կուսակցությունների իոկապես պրոլետարական տարրերից կազմված կոմմունիստական կուսակցություններից, իսկ ձևականորեն հիմնվել ե իր առաջին համագումարում՝ 1919 թ. մարտին, Մոսկվայում։ Կոմմունիստական ին-

տերնացիոնալը, վոր բոլոր յեր-  
կըրներում պրոլետարական մաս-  
սաների մեջ ավելի ու ավելի հա-  
մակրանք ե գտնում, վոչ միայն  
իր անվամբ ե վերադառնում դե-  
պի մարքսիզմը, այլև իր ամբողջ  
գաղափարական քաղաքական բո-  
վանդակությամբ, իր բոլոր գոր-  
ծողություններով իրազործում ե  
Մարքսի հեղափոխական ուսմուն  
քը՝ դաշտ բուրժուական ոպպոր-  
ներից:

Ավելի կոնկրետ կերպով զար-  
գացնելով պրոլետարական դիկ-  
տատուրայի նպատակները ըստ  
Ռուսաստանի պայմանների վորի  
պլիսավոր հատկանիշը ընակչու-  
թյան մանր բուրժուական շեր-  
նըն ե, չամ. կ. կ.-ը հետեւյալ

կերպով ե վորոշում այդ նպա-  
տակները:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԲՆԱԳԱՎԱԾՈՒՄ

1. Բուրժուական հանրապետու-  
առությունը, անդամ ամենից գե-  
մոկրատականը, վոր սրբագործ-  
վում ե համաժողովրդական, հա-  
մազգային կամ ապադասակար-  
գային կամքի լոգունգներով, գործ  
նական ում անխուսափելիորեն  
բուրժուազիայի դիկտատուրա յե-  
ներկայացնում, աշխատավորնե-  
րի ահագին մեծամասնությունը  
մի բուռն կապիտալիստների կող-  
մից շահագործող և ձնշող մի մե-  
քենա յեւ շնորհիվ հողի և արտա-  
գրության այլ միջոցների մաս-  
նավոր սեփականության: Դրան  
հակառակ, պրոլետարական կամ  
խորհրդային դեմոկրատիան ամ-

բողջ պետական ապարարատի, տեղային և կենտրոնական, վարչից վեր, մշտական և միակ հիմքը դարձրեց հենց կապիտալիզմից ձնշված դասակարգերի, պրոլետարների և ամենաչքավոր գյուղացիների—կիսապրոլետարների, այսինքն բնակչության ահազին մեծամասնության մասսայական կազմակերպությունները:

Հենց դրանով խորհրդային պետությունն իրագործեց, ի դեպքան համեմատ ավելի լայն չափով, քան վորեւ այլ տեղ, տեղական և շրջանային ինքնավարությունը, առանց վերից նշանակված վորեւ իշխանության: Կուսակցության նպատակն ե անդուլ աշխատանքով իսկապէս և լիովին կենսագործել դեմոկրատիզմի այդ գերագույն տիպարը, վորն իր կանոնավոր գործառության համար

մասսան ե ը ի կուլտուրականության, կազմակերպվածության և ինքնագործունեյության մակերևույթի մշտական բարձրացում ե պահանջում:

2. Հակառակ բուրժուական դեմոկրատիային, վոր թագյնում ե իր պետության դասակարգային բնույթը, խորհրդային իշխանությունը բացորոշ ընդունում ե ամեն մի պետության անխուսափելի դասակարգային բնույթը. քանի չի չքացել բոլորովին հասարակության դասակարգային բաժանումը և դրա հետ միասին բաժանումը ամեն մի պետական իշխանություն: Խորհրդային պետությունը, իր իսկ եյությամբ, նպատակ ունի ձնշել շահագործողների դիունի մադրությունը, և Խորհրդային մադրությունը, չի վարասահմանագործությունը չի վարասահմանագործողներին քանում զրկել շահագործողներին քա-

զաքական իրավունքներից՝ հիմքը ընդունելով, վոր ամեն մի ազատություն խաբերայություն ե, յեթե հակասում ե աշխատանքի ազատագրմանը կապիտալի ճշնշումից։ Անշեղ գլուխ բերելով շահագործողների դիմադրության ձնշումը և գաղափարականորեն պայքարելով բուրժուական իրավունքների ու ազատությունների բացարձակ բնույթի վերաբերմամբ խորապես արմատացած նախապաշարմունքների դեմ՝ պրոցետարիատի կուսակցությունը միաժամանակ իրեն նպատակ եղնում պարզաբանել, վոր քաղաքական իրավունքներից զրկելն ու ազատության յուրաքանչյուր սահմանափակում անհրաժեշտ են միայն վորպես պայքարի ժամանակավոր միջոց՝ իրենց արտոնությունները պաշտպանելու կամ

վերականգնելու դիտումով շահագործողների ձեռնարկած փորձերի դեմ։ Այսքան, վորքան կվերանաշմարդը մարդուն շահագործելու որյեկտիվ հնարավորությունը, կվերանաշմարդ այդ ժամանակականը միջոցի անհրաժեշտությունը, և կուսակցությունը կծդտի սահմանափակել կամ լիովին վերացնել այդ։

3. Բուրժուական դեմոկրատիան սահմանափակվում ել ձեռնարեն տարածելով բոլոր քաղաքացիների վրա քաղաքական իրավունքները և ազատությունները, ինչպիսիք են ժողովների, միությունների, մամուլի իրավունքները։ Բայց իրոք բուրժուական դեմոկրատիայի ժամանակ ինչպես վարչական պրակտիկան, այնպես ել զիստավորապես աշխատավորների տնտեսական ստրկու-

թյունը շարունակ զրկում եյին  
վերջիններիս այդ աղատություն.  
Ներն ու իրավունքները քիչ թե  
շատ լայնորեն ոգտագործելու  
հնարավորությունից:

Ընդհակառակը, պրոլետարական  
գեմոկրատիան իրավունքների և  
աղատությունների ձևական հըռ-  
չակման տեղը գնում է դրանց  
փաստական ասլունովումն ամենից  
առաջ և ամենից շատ բնակչու-  
թյան հենց այն դասակարգերին,  
վորոնք ճնշվում եյին կապիտա-  
լիզմից, այսինքն՝ պրոլետարիա-  
տին և գյուղացիությանը: Դրա  
համար խորհրդային իշխանու-  
թյունը խլում է բուրժուազիայից  
շինություններ, տպարաններ,  
թղթի պահեստներ և այլն՝ գնելով  
դրանք աշխատավորների ունրանց  
կազմակերպությունների լիակա-  
տար տրամադրության տակ:

Համ. Կ.Կ. Նավատակն ե աշխա-  
տավոր ընակչության միշտ ավե-  
լի լայն մասսաներ գրավել դե-  
մոկրատական իրավունքներից և  
աղատություններից ո գտվ ելու  
համար և ընդալիցնել սրա նյու-  
թական հնարավորությունը:

4. Բուրժուական գեմոկրատի-  
ան դարերի ընթացքում հայտա-  
րաբել է մարդկանց իրավահավա-  
սարություն՝ անկախ սեռից, կրո-  
նից, ցեղից և ազգությունից,  
բայց կապիտալիզմը վոչ մի տեղ  
թույլ չի տվել փաստորեն իրա-  
գործելու այդ իրավահավասարու-  
թյունը, իսկ իմպերիալիստական  
շրջանում ցեղային և ազգային  
ճնշումը սրել է ամենաուժեղ չա-  
փով: Միայն շնորհիվ նրա, վոր  
խորհրդային իշխանությունն աշ-  
խատավորների իշխանություն ե՝  
նա կարողացավ մինչև վերջը և

կյանքի բոլոր ասպարեզներում, առաջին անգամ աշխարհում, գըլուխ բերել այդ իրավահավասարությունը, մինչ կանանց անհավաստրության վերջին հետքերի վոչնչացումն ամուսնական և առհասարակ ընտանեկան իրավունքի շրջանում։ Ներկա մոմենտին կուսակցության նպատակն է գերազանցորեն դաղափարական և դաստիարակչական աշխատանք տանել՝ նախկին անհավասարության ու կանխակալ համոզմունքների բոլոր հետքերը միանգամայն վոչնչացնելու, մանավանդ պրոլետարիատի և գյուղացիության յետամաց շերտերի մեջ։

Չսահմանափակվելով կանանց ձևական իրավահավասարությամբ՝ կուսակցությունը ձրդտում է նրանց ազատագրել հնացած տնային տնտեսության նյու

թական ծանրությունից՝ փոխարինելով այն կոմմունիստական իմունքներով կազմակերպված տներով, հասարակական ճաշարաններով, կենտրոնական լվացարաններով, մսուրներով և այլն։

5. Բուրժուական գեմոկրատիայից և պարլամենտարիզմից անհամեմատ ավելի շատ հնարավորություն ընձեռելով աշխատավորական մասսաներին՝ պատգամավորների ընտրություն կայացնելու և նրանց հետ կանչելու ամենահեշտ և բանվորներին ու գյուղացիներին մատչելի յեղանակով՝ խորհրդային իշխանությունը միաժամանակ վոչնչացնում է պարլամենտարիզմի բացասական կողմերը, մանավանդորենսիֆիր և գործադիր իշխանությունների անջատումն իրարից, ներկայացուցչական ժողովների

կտրվածությունը մասսաներից և  
այլն:

Խորհրդային պետությունը մոռ-  
տեցնում է պետական ապարա-  
տը մասսաներին նաև նրանով,  
վոր ընտրական միավորը և պե-  
տության հիմնական բջիջը վոչ  
թե տերրիտորիալ շրջանն և հա-  
մարվում, այլ արտադրական մի-  
ավորը (գործարան, ֆաբրիկա):

Կուսակցության նպատակը կա-  
յանում է նրանում. վոր ամբողջ  
աշխատանքն այդ ուղղությամբ  
առաջ տանելով՝ իրագործվի իշ-  
խանության որգանների և աշ-  
խատագոր մասսաների ավելի  
սիրտ մերձեցումը՝ այդ մասսա-  
ների միջոցով դեմոկրատիզմի  
ավելի և լրիվ իրագործման հո-  
ղի վրա և առանձնապես պաշտո-  
նատար անձանց պատասխանա-  
տվության և հաշվետվության

յենթարկելու ճանապարհով:

6. Մինչդեռ բուրժուական դե-  
մոկրատիան, չնայած իր գեկա-  
րացիաներին, զորքն ունեոր դա-  
սակարգերի գործիք և դարձնում,  
անջատելով այն աշխատավոր  
մասսաներից և հակադրելով այն  
դրանց, քաղաքական իրավունք-  
ներն իրագործելու հնարավորու-  
թյունը զինվորների համար վո-  
չընչացնելով կամ գժվարացնելով,  
խորհրդային պետությունը ձու-  
լում է իր որգաններում, խոր-  
հուրդներում, բանվորներին ու  
զինվորներին՝ նրանց լիակատար  
իրավահավասարության և շահե-  
րի միության հիմունքներով; Կու-  
սակցության նպատակն է պաշտ-  
պանել ու զարգացնել բանվորնե-  
րի և զինվորների այդ միությու-  
նը խորհուրդներում, ամրացնելով  
զինված ուժի և պրոլետարիատի

ու կիսապրոլետարիատի կազմակերպությունների անքաղաքական կազմակերպությունների հետ պատմականորեն կազմաձայն գործությունների հետ պատմականորեն կազմաձայն գործությունների ամենից շատ համակենտրոնացած, և ի ացած, լուսավորված և պայքարում կոփված մասի՝ զեկավար դերն արտահայտվել ե ինչպես հենց խորհուրդների առաջացման գործում, նույնպես և դրանց իշխանության որդաններ դառնալու ամբողջ ընթացքում։ Մեր Խորհրդային Սահմանադրությունն արտահայտել ե այդ՝ արդյունաբերական պրոլետարիատին մի շարք արտունություններ տալով՝ համեմատած գյուղի ավելի ցրիվ մանր բուրժուական մասսաների հետ։

Համ. Կ. Կ. պարզաբանելով գյու

դի սոցիալական կազմակերպման գժվարությունների հետ պատմականորեն կազմաձայն գործությունների ժամանակավոր ընույթը, պետք է ձգտի անշեղ ու սիստեմատիկարեն ոգտագործելու արդյունաբերական պրոլետարիատի այդ դրությունն այն նպատակով, վորպեսզի հակառակ նեղ-համքարական և նեղ-արհեստակցական այն շահերին, վոր կապիտալիզմն եր աճեցնում բանվորների մեջ, առաջավոր բանվորների հետ ավելի սերտ շաղկապի գյուղական պրոլետարների ու կիսապրոլետարների ամենից յետամսաց ու ցրիվ մասսաներին այլ և միջին գյուղացիության։

8. Միայն պետության խորհը դարձային կազմակերպության շնորհիվ ե, վոր պրոլետարիատի հեղափոխությունը կարող եր մի-

անգամից փշրել և հիմնիվեր կոր-  
ծանել պետության հին, բուրժու-  
կան, չինովական և դատավո-  
րական ապագաբառը։ Սակայն  
լայն մասսաների վոչ բավակա-  
նաչափ բարձր կուլտուրական  
մակարդակը, մասսաների կող-  
մից պատասխանատու դիրքեր  
ուղարկված գործիչների անհրա-  
ժեշտ վարչական փորձառության  
բացակայությունը, հին դպրոցի  
մասնագետների ծանր պայման-  
ներում արագությամբ գործի հը-  
րավիրելու անհրաժեշտությունն  
ու քաղաքային բանվորների ա-  
մենից զարգացած շերտի զբաղ-  
վածությունը զինվորական գոր-  
ծերով՝ խորհրդային կազմի ներ-  
սում բյուրոկրատիզմի մասնակի-  
վերածնունդ են առաջացրել։

Ամենավճռական պայքար մզե-  
լով բյուրոկրատիզմի դեմ՝

Համ. Կ. Կ. այդ չարիքի լիակա-  
տար հաղթահարման համար դի-  
մում ե հետեւյալ միջոցներին.

1. Պարտադիր կերպով առաջ  
քաշել խորհրդի յուրաքանչյուր  
անդամին՝ պետության վարչու-  
թյան վորոշ աշխատանք կատա-  
րելու համար.

2. Հաջորդաբար փոխել այդ  
աշխատանքներն, այնպես, վոր  
խորհրդի անդամներն աստիճա-  
նաբար ընդգրկեն վարչության  
բոլոր ճյուղերը.

3. Աստիճանաբար առաջ քաշել  
ամբողջ աշխատավոր բնակչու-  
թյունը գլխովին պետության  
վարչական աշխատանքին մաս-  
նակցելու համար։

Բոլոր այս միջոցների լիակա-  
տար և բազմակողմանի գործա-  
դրությունը հաջորդ քայլը լինե-  
լով այն ճանապարհի, վորի վրա

կանգնած եր Պարիզի Կոմմունան,  
և վարչության ֆունկցիաների  
պարզացումը աշխատավորների  
կուլտուրական մակարդակի բարձ  
րացման հետ միասին, — տանում  
են դեպի պետական իշխանու-  
թյան վոչնչացումը:

### ԱԶԴԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵ- ՐԻ ԲՆԱԳԱՎԱԾԱՌՈՒՄ

9. Ազգային հարցում Համ. Կ.  
Կ. ղեկավարվում ե հետեւյալ ա-  
ռաջադրություններով.

ա) Ցելակետ ե ընդունվում  
տարբեր ազգությունների պրո-  
լետարների և կիսապրոլետարնե-  
րի մերձեցման քաղաքականու-  
թյունը՝ սիացյալ հեղափոխական  
աշխատանք կատարելու կալվա-  
ծատերների և բուրժուազիայի տա-  
պալման համար:

բ) Վորպեսզի հաղթահարվի

ճնշված յերկրների աշխատավոր  
մասսաների անվատահությունը՝  
դեպի այն պետության պրօլատա-  
րիատը, վորը ճնշում ե այդ յեր-  
կըրները՝ անհրաժեշտ է վոչնչաց-  
նել ամեն մի ազգային խմբակ-  
ցության բոլոր և յուրաքանչյուր  
տեսակի արտոնությունները, ճա-  
նաչել ազգությունների լիակա-  
տար իրավահավասարությունը,  
ընդունել պետական անջատման  
իրավունքը գաղութների և ան-  
իրավահավասար ազգություննե-  
րի համար:

դ) Նույն նպատակով, վորպես  
դեպի լիակատար միություն տա-  
նող անցողական մի ձև, կուսակ-  
ցությունը ձգտում է խորհրդա-  
յին տիպարով կազմակերպված  
պետությունների ֆեդերատիվ  
միացման:

դ) Այն հարցում, թե ովքեր են

ազգային անջատման կամքի կը-  
րողները, Համ. Կ. Կ. կանգնած ե  
պատմական դասակարգացին տե-  
սակետի վրա, հաշվի առնելով,  
թե իր պատմական դարձացման  
վոր աստիճանի վրա յե կանգնած  
ավալ ազգությունը՝ միջնադա-  
րից դեպի բուրժուական դեմոկ-  
րատիա, թե բուրժուական դե-  
մոկրատիայից դեպի խորհրդային  
կամ պրոլետարական դեմոկրա-  
տիա տանող ճանապարհի վրա:

Համենայն դեպս բոլոր այն  
ազգությունների պրոլետարիա-  
տր, վորոնք ճնշող ազգություն-  
ներ են յեղել, պետք է առանձին  
զգուշություն և առանձին ուշա-  
դրություն ցույց տան ճնշված  
անիրավահավասար ազգություն-  
ների աշխատավոր մասսաների  
հնավանդ ազգային դգացմունք-  
ների վերաբերմամբ։ Միայն այդ-

պիսի քաղաքականությամբ ե  
հնարավոր պայմաններ ստեղծել  
միջազգային պրոլետարիատի ի-  
րոք ամուր, հոժարակամ միու-  
թյան համար, ինչպես այդ ցույց  
տվեց մի շարք ազգային խորհր-  
դային հանրապետությունների  
Խորհրդային Ռուսաստանի շուրջը  
միանալու փորձը։

### ՌԱԶՄԱԿԱՆ ԲՆԱԴԱՎԱՐՈՒԹՅ

10. Բազմական բնագավառում  
կուսակցության նպատակները  
սահմանվում են հետեւյալ հիմնա-  
կան առաջնադրություններով.

ա) Իմպերիալիզմի կազմակուծ-  
ման և աճող քաղաքիացական  
պատերազմի ժամանակաշրջա-  
նում՝ հնարավոր չե վոչ հին բա-  
նակը պահպանել, վոչ նորը կազ-  
մակերպել այսպես կոչված ապա-  
գասակարգային կամ համազգա-

յին հիմքերի վրա։ Կարմիր բանակը վորպես պրոլետարական դիկտատուրայի զործիք՝ անհրաժեշտորեն պետք եւ ունենա բացարձակ դասակարգային բնույթ, այսինքն՝ կազմվի բացառապես պրոլետարիատից և սրան մոտիկ՝ գյուղացիության կիսապրոլետական շերտերից։ Միայն դասակարգերի վոչնչացման ընթացքում և, վոր նմանորինակ դասակարգային բանակը կդառնա համաժողվագական սոցիալիստական միջիա։

բ) Անհրաժեշտ եւ բոլոր պրոլետարներին ու կիսապրոլետարներին ամենալայն չափով սովորեցնել ուազմական գործը և դպրոցում մտցնել համապատասխան առարկաների դասավանդություն։  
գ) Կարմիր բանակի ուազմական ուսուցման ու դաստիարակման

գործը պետք եւ կատարվի դասակարգային համախմբման և սոցիալիստական լուսավորութան հիմունքով։ Ուստի անհրաժեշտ են բարեհույս և անձնվեր կոմունիստ քաղաքական կոմիսարներ, ուազմական պետի հետ մեկ տեղ և յուրաքանչյուր զորամասում կոմմունիստական բջիջներ կազմակերպելու՝ ներքին գաղափարական կապ և գիտակից դիսցիպլինա հաստատելու համար։

դ) Հին բանակի կազմակերպությանը հակադիր, անհրաժեշտ եւ ըստ կարելույն կարճ ժամանակամիջոց զուտ զորանոցալին ուսուցման համար, զորանոցների մերձեցում ուազմական և ուազմքաղաքական դպրոցների տիպարին, ըստ կարելույն սերտ կապ զինվորական կազմակերպությունների և ֆարբիկաների, գործա-

բանների, արհեստակցական միությունների, չքավոր գյուղացիների կազմակերպությունների միջն:

ե) Մատաղ հեղափոխական բանակի մեջ կարող ե անհրաժեշտ կազմակերպչական կապ և կայունություն ստեղծվել գիտակից բանվորների և գյուղացիների միջից յելած, առաջին նվազ թերկուղ ստորին, հրամանաւարական կազմի միջոցով միայն: Այդպատճառով ավելի ընդունակ ու յեռանդուն և սոցիալիզմի գործին նվիրված զինվորներին հրամանաւարական պաշտոնների համար պատրաստելը՝ բանակի ստեղծման գործում ամենակարևոր խնդիրներից մեկն ե:

զ) Անհրաժեշտ ե ամենալայն կերպով ոգտագործել և գործադրել նաև վերջին համաշխարհա-

լին պատերազմի ոպերատիվ և տեխնիկական փորձը: Այս նպաստակով անհրաժեշտ ե բանակի կազմակերպության և նրա ոպերատիվ զեկավարության համար լայն չափերով գործի դնել հինգանակի զարոցն անցած զինվորական մասնագետներին: Իր հերթին, այսպիսի գործակցության անհրաժեշտ պայմանն ե բանակի քաղաքական զեկավարության և հրամանաւարական կազմի լիակատար վերահսկողության կենտրոնացումը բանվոր դասակարգի ձեռքբռնմ:

յե) Հրամանաւարական կազմի ընտրականության պահանջը, վորահագին սկզբունքային նշանակություն ուներ բուրժուական բանակի վերաբերմամբ, վորտեղ հրամանաւարական կազմը ջոկվում և դաստիարակվում եր վոր-

պես զինվորների և զինվորների  
միջոցով՝ աշխատավոր մասսանե-  
րի դասակարգային հաղատակեց.  
ման ապահարատ, միանգամայն  
կորցնում և իր սկզբունքային  
նշանակությունը դասակարգային  
բանվորական և գյուղացիական  
Կարմիր բանակի վերաբերմամբ:  
Ընտրականության և նշանակելու  
հարավոր կոմբինացիան թելա-  
դրվում և հեղափոխական դասա-  
կարգային բանակի գորակազմու-  
թյան մակարգակից և կախված  
և զորամասերի կապակցության  
աստիճանից, հրամանատարական  
կազմերի կազմից և այլն:

### ԴԱՏՈՒԱՆ ԲՆԱԴՅԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ.

11. Իր ձեռքն առնելով ամբողջ  
իշխանությունը և առանց մնա-  
ցորդի վերացնելով բուրժուական  
տիրապետության որդանները —

նախկին դատարանների կառուց-  
վածքը՝ պրոլետարական դեմոկ-  
րատիան բուրժուական դեմոկ-  
րատիայի «դատավորների ընտ-  
րականությունը ժողովրդի միջո-  
ցով» Փորմուլայի փոխարեն ա-  
ռաջ և քաշել «դատավորների ընտ-  
րականությունն աշխատավոր-  
ներից և միայն աշխատավորնե-  
րի միջոցով» դասակարգային լո-  
գունզը և այն կիրառել դատա-  
րանի կազմակերպության մեջ,  
միաժամանակ հավասարեցնելով  
յերկու սեռերի բոլոր իրավունք-  
ները, ինչպես դատավորների ընտ-  
րության, նույնպես և դատա-  
վորների պարտականությունները  
կատարելու նկատմամբ:

Պրոլետարիատի և չքավոր գյու-  
ղացիության ամենալայն մասսա-  
ներին դատական գործի կատար-  
ման մասնակից անելու համար՝

դատարանի մեջ մտցված և մշտա-  
պես փոխարինվող ժամանակավոր  
դատավոր-ատենակալների մաս-  
նակցությունը՝ վերապահանձնով  
դրանց ցուցակագրությունը մաս  
սայական բանվորական կազմա-  
կերպություններին, արհեստակ-  
ցական միություններին և այլն:

Նախկին տարբեր կառուցված-  
քի և բազմաթիվ ինստանցիաներ  
ունեցող դատարանների անվերջ  
շարանի փոխարին՝ միասնական  
ժողովրդական դատարան ստեղ-  
ծելով՝ խորհրդային իշխանու-  
թյունը պարզ ձև և տվել դատա-  
րանների կառուցվածքին՝ նրան  
բացառապես մատչելի դարձնելով  
բնակչությանը և վերացնելով  
գործավարության ամեն տեսակի  
քաշքումները:

Վերացնելով տապալված կա-  
ռավարությունների որենքները,

խորհրդային իշխանությունը  
հանձնարեկ և խորհուրդների  
ընտրած դատավորներին իրագոր  
ծել պրոետարիատի կամքը, գոր-  
ծադրելով նրա գեկրետները, իսկ  
այդպիսիների բացակայության  
կամ թերի լինելու գեպօռմ՝ զե-  
կավարվել սոցիալիստական իրա-  
վագիտակցությամբ:

Պատժի բնագավառում, այսպես  
կազմակերպված դատարաններն  
արդեն իսկ արմատապես փոխել  
են պատժի բնույթը՝ լայն չափե-  
րով իրագործելով պայմանական  
դատավարությունը, հասարա-  
կական պարսավանքը կիրառելով  
վորպես պատժի միջոց, վերածե-  
լով բանտարկությունը պարտա-  
գիր աշխատանքի՝ աղատության  
վերապահումով, փոխարինելով  
բանտերը կրթական հաստատու-  
թյուններով և հսարաւորություն

տալով գործադրելու ընկերական  
դատարանների պրակտիկան:

Համ. կ կ հետամուտ լինելով  
դատարանի ապագա զարգացմանն  
այդ իսկ ուղղությամբ, պետք է  
ձգտի՝ դատավարական պարտա-  
կանությունների կատարման հա-  
մար գործի դնել ամրող աշխա-  
տավոր բնակչությունը գլխովին  
և պատիժների սիստեմը վերջնա-  
կանապես փոխարինել դաստիա-  
րակչական բնույթ կրող միջոցնե-  
րի սիստեմով:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒ-  
ԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

12. Ժողովրդական լուսավորու-  
թյան բնագավառում Համ. կ. կ.  
իրեն նպատակ ե դնում ավար-  
տել 1917 թվի Հոկտեմբերյան  
հեղափոխության սկսած գործը՝  
դպրոցը բուրժուազիայի դասա-

կարգային տիրապետության գոր-  
ծիքից գարձնել հասարակության  
դասակարգային բաժանումի լիա-  
կատար վոչնչացման գործիք՝ հա-  
սարակության կոմմունիստական  
վերածնողի գործիք

Պրոլետարիատի դիկտատուրա-  
յի շրջանում, այսինքն կոմմու-  
նիզմի լիակատար իրազործումը  
հնարավոր դարձնող պայմանների  
նախապատրաստության շրջա-  
նում՝ դպրոցը վոչ միայն պետք  
է տարածի կոմմունիզմի սկըզ-  
բունքներն ընդհանրապես, այլև  
տարածի պրոլետարիատի գաղա-  
փարական, կազմակերպչական,  
կրթական ազգեցությունն աշխա-  
տավոր մասսաների կիսապրոլե-  
տարական և վոչ-պրոլետարական  
խավերի վրա՝ նպատակ ունենա-  
լով կոմմունիզմը վերջնականա-  
պես հաստատելու ընդունակ սե-

բունդ գաստիարակել։ Այդ տեսակետից ներկայիս մոտավոր նպատակն ե՝ խորհրդային իշխանության արդեն հաստատած դպրոցական ու լուսավորական գործի հատեցալ հիմքերի առաջիկա զարգացումը։

ա) Զրի և պարտադիր՝ ընդհանուր և պրլիտեխնիկական (տեսականորեն և գործնականորեն արտադրության բոլոր գլխավոր ձյուղերին ծանոթացնող) կաթություն յերկու սեռի բոլոր յերեխաների համար մինչև 17 տարեկանը։

բ) Նախադպրոցական հիմնարկությունների՝ մսուըների, պարտեզների, ապաստարանների և այլն—ցանցի կազմակերպումը հասարակական դաստիարակության բարելավման և կնոջ ազտագրման նպատակով։

գ) Միասնական աշխատանքի դպրոցի սկզբունքների լիակատար իրավործումը — դասավանդումը մայրենի լեզվով, յերկու սեռերի յերեխաների խառն ուսուցում, անպայման աշխարհիկ, այսինքն վորեկ կրօնական ազգեցությունից ազատ դպրոց, ուսուցման և հասարակական — արտադրական աշխատանքի միջև սերտ կապ հաստատող, կոմմունիստական հասարակության համար բազմակողմանի զարգացում ունեցող անդամներ պատրաստող դպրոց։

դ) Բոլոր սովորողներին սննդի, հագուստի, վոտնամանի, դասապիտույքների մատակարարում պետության հաշվով։

ե) Կոմմունիզմի գաղափարներով ներշնչված՝ լուսավորության աշխատավորների նոր կազրեր պատրաստելը։

զ) Ներգրավել աշխատավոր  
բնակչությանը ակտիվ մասնակ-  
ցություն ցույց տալու լուսավո-  
րության գործին («ժողովրդա-  
կան կրթության խորհուրդների»  
ծավալում, գրագետների մորիլի-  
զացիա և այլն):

յե) Բանվորների և գյուղացի-  
ների ինքնակրթության և ինք-  
նազարգացման գործին պետական  
բազմակողմանի ոժանդակություն  
(արտադպրոցական կրթական հաս-  
տառությունների ցանցի կազ-  
մակերպություն—գրադարաններ,  
հասակավորների գպրոց, ժողովը-  
դական տներ և համալսարաններ,  
կուրսեր, դասախոսություններ,  
կինոմանուգրաֆներ, ստուդիաներ  
և այլն):

ը) Արհեստակցական կրթու-  
թյան գործի ընդլայնում 17 տա-

րեկանից բարձր հասակ ունեցող-  
ների համար, ընդհանուր պոլի-  
տեխնիկական գիտելիքների հետ  
միասին:

թ) Բարձրագույն գոլոցի լսա-  
րանների լայն մատչիլիություն  
բոլոր սովորել կամեցողներին և  
առաջին հերթին բանվորների  
համար. բարձրագույն գոլոցում  
դասավանդելու ասպարեզ տալ  
բոլոր նրանց, վորոնք կարող են  
այնտեղ ուսուցանել, թարմ գի-  
տական ուժերի և կաֆեդրայի  
միջև յեղած բոլոր և յուրաքան-  
չյուր տեսակի արհեստական ար-  
գելքների գերացում. ուսանողնե-  
րի նյութական ապահովում, վոր-  
պեսզի պրոլետարներին և գյու-  
ղացիներին փաստական հնարա-  
վորություն տալ բարձրագույն  
դպրոցներից ոգտվելու համար:

ժ) Այլև անհրաժեշտ և աշխա-

տավորի համար բանալ և մատ-  
չելի դարձնել արվեստի բոլոր  
գանձերը, վոր ստեղծվել են նը-  
րանց աշխատանքի շահագործ-  
ման հիմունքով ու մինչև այժմ  
շահագործողների բացառիկ տրա-  
մադրության տակ են գտնվել:

(Ժամանակակից պատմական գաղա-  
փարների ամենալայն պրոպա-  
գանդային ծավալում և այդ նպա-  
տակով պետական իշխանության  
ազգարատի ու միջոցների ոդ-  
տագործում:

ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ-  
ՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՐՈՒՄ.

13) Կրոնի վերաբերմամբ Համ.  
Կ. Կ. չի բավականանում արգեն-  
իսկ որինականացված յեկեղեցին  
պետությունից և դպրոցը յեկե-  
ղեցուց բաժանելու սկզբունքով.  
այսինքն սկզբունք, վոր բուրժու-

ական դեմոկրատիան մուծում ե-  
իր ծրագրների մեջ, սակայն աշ-  
խարհում վոչ մի տեղ չի գործա-  
դրում լիովին, շնորհիվ կապի-  
տալի և կրօնական պրոպագան-  
դայի միջև յեղած բազմատեսակ  
փաստական կապերի:

Համ. Կ. Կ. զեկավարվում ե այն  
համոզումով, թե միայն մասսա-  
ների բովանդակ հասարակական-  
տնտեսական գործունեյության  
ոլանաչափության ու գիտակցու-  
թյան իրագործումն ե, վոր կա-  
րող ե լիովին մեղնել կրօնական  
նախապաշարումները: Կուսակ-  
ցությունը ձգտում ե լիովին փըշ-  
ըել հարստահարող դասակարգե-  
րի և կրօնական պրոպագանդայի  
կազմակերպության միջև յեղած  
կապը՝ նպաստելով աշխատավոր  
մասսաների փաստական ազատա-  
գըրմանը կրօնական նախապա-

շարմունքներից և կազմակերպե-  
լով ամենալայն գիտական-լուսա-  
վորական և հակակրոնական պրո-  
պագանդա: Ընդ սմին անհրաժեշտ  
է հոգատարությամբ խուսափել  
հավատացյախների զգացմունքնե-  
րի ամեն տեսակի վիրավորան-  
քից վորով միայն ամրացնում են  
մոլեուանդությունը:

### ՏՆՏԵՍԱԿՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

14) Անշեղ շարունակել և ա-  
վարտել բուրժուազիայի սեփակա-  
նազրկումը, վորն սկսած ե և  
իր գլխավոր ու հիմնական մասե-  
րում արդեն վերջացրած ե, ան-  
շեղ շարունակել և ավարտել ար-  
տադրության միջոցները ու շըր-  
ջանառությունը Խորհրդային Հան-  
րապետության սեփականություն  
դարձնել այսինքն դարձնելով այն  
բոլորը աշխատավորների ընդհա-

նուր սեփականություն:

15) Վորպես խորհրդային իշ-  
խանության ամբողջ տնտեսա-  
կան քաղաքականությունը վորո-  
շող գլխավոր և հիմնական նըպա-  
տակ՝ անհրաժեշտ համարելյերկ-  
րի արտադրողական ուժերի  
բարձրացումը բոլոր միջոցներով:  
Ինկատի ունենալով յերկրի ծայր  
աստիճան քայլայված լինելը,  
ըստ ամենայնի շատացնել բը-  
նակչության անհրաժեշտ մթերք-  
ների քանակը, վորի իրականաց-  
ման համար պետք ե յենթարկ-  
ված լինեն մնացած խնդիրները:  
Այդ ընազավառում ստացված  
գործնական արդյունքներով  
պետք ե չափվի ժողովրդական  
տնտեսության հետ կապված խոր  
հըրդային յուրաքանչյուր հիմնար-  
կության աշխատանքի հաջողու-  
թյունները: Ընդ սմին անհրա-

ժեշտ ե առաջին հերթին ուշադրություն դարձնել հետեւյալի վրա:

ա) Իմպերիալիստական տընտեսության կազմակերպությունը խորհըլքային շինարարության առաջին շրջանի համար ժարանգություն է թողել մի տեսակ քառու, արտադրության կազմակերպության և նրա ղեկավարման մեջ: Վորպես հիմնական նպատակներից մեկը՝ ավելի ևս համառորեն առաջ ե քաշվում յերկրի ամբողջ տնտեսական գործունեյության մաքսիմալ միացումը մի համապետական պլանով. արտադրության ամենամեծ կենտրոնացումը՝ արտադրության առանձին ճյուղերի ու նրանց խմբակցությունների միացման՝ այն լավագույն արտադրական միավորների մեջ կենտրոնացնելու, այլև

տնտեսական նպատակների արագ իրագործման իսաստով. արտադրական ամբողջ ապագարատի լիակատար կարգավորումը, յերկրի բոլոր նյութական միջոցների նպատականարմար և խնայող ոգտագործումը:

Ընդ սմին անհրաժեշտ ե հոգ տանել այլ ժողովուրդների հետ տնտեսական աշխատակցության և քաղաքական կապերի ընդլայն ման մասին՝ ձգտելով միաժանակ միասնական տնտեսական պլան ստեղծել այնպիսի ժողովուրդների հետ, վորոնք արդեն խորհրդային կարգերի յեն անցել:

բ) Անհրաժեշտ ե լայնորեն ողտագործել մանր և տնայնագործական արդյունաբերությունը տնայնագործներին պետական պատվերներ տալով, տնայնագործությունը և մանր արդյունագործությունը:

Նաբերությունը մուծել հում նյութի և վառելանյութի մատակարարման ընդհանուր պլանի մեջ։ այլև ֆինանսական ոգնություն մատակարարել դրանց, առանձին տնայնագործների տնայնագործական արտելների, արտադրական կողերատիվների և մանր ձեռնաբեկությունների ավելի խոշոր արտադրական և արդյունագործական միավորների մեջ միանալու պայմանով։ Խրախուսել նման միացումները ընձեռելով նրանց տնտեսական արտօնություններ, վոր ուրիշ միջոցների հետ միասին նպատակ պիտի ունենան վերացնել տնայնագործների՝ մանր արդյունագործներ դառնալու ձգտումը և դյուրացնել այդ հետամնաց արտադրության փոխանցումն ավելի բարձր՝ խոշոր մեքենաշարժ արդյունաբե-

### բության։

գ) Հանրայնացրած արդյունա թերության կազմակերպչական ապահարատն առաջին հերթին պետք է հենվի արհեստակցական միությունների վրա։ Նրանք պետք են միշտ ավելի և ավելի աղատագրվեն համքարային սահմանափակումից ու դառնան իսոցը արտադրական միություններ, վոր ընդգրկում են արտադրության տվյալ ճյուղի աշխատավորների մեծամասնությունը, իսկ հետզհետե և գլխավին բոլորին։

Խորհրդային հանրապետության որենքների և ընդունված պրակտիկայի համաձայն՝ արգեն իսկ մասնակցություն ունենալով արդյունաբերության բոլոր տեղային և կենտրոնական ղեկավարություններում՝ հետագա արհեստակցական միությունները

պետք և փաստորեն իրենց ձեռ-  
քում կենարոնացնեն բովանդակ  
ժողովրդական տնտեսության զե-  
կավարությունը վորպես մի տըն  
տեսական ամբողջություն։ Այդ-  
պիսով՝ ապահովելով ժողովրդա-  
կան տնտեսությանը զեկավարող  
կենարոնական պետական վար-  
չության և աշխատավոր լայն  
մասսաների անքակտելի կապը՝  
արհեստակցական միությունները  
պետք և ամենալայն չափով վեր-  
ջինն երիս տնտեսավարության  
գործին անմիջապես մասնակից  
անեն։ Արհեստակցական միու-  
թյունների մասնակցությունը  
տնտեսավարության մեջ և միա-  
ժամանակ նրանց միջոցով լայն  
մասսաների գործակցությունը՝  
խորհրդային իշխանության տնտե-  
սական տպապարատի բյուրոկրա-  
տացման զեմ պայքարելու գլու-

խավոր միջոցն և և հնարավորու-  
թյուն և տալիս իրոք ժողովրդա-  
կան վերահսկողություն հաստա-  
տելու տնտեսության վիճակի  
վրա։

Դ) Ժողովրդական տնտեսու-  
թյան պլանաչափ զարգացման  
նպատակի տեսակետից պետու-  
թյան մեջ յեղած ամբողջ բան-  
գորական ուժի անհրաժեշտ մաք-  
սիմալ ոգտագործումը, նրա ու-  
ղիղ բաշխումն ու վերաբաշխումը  
ինչպես տարրեր տերրիտորիալ  
շրջանների նույնպես և ժողովը-  
րդական տնտեսության տարբեր  
ճյուղերի միջև, պետք և կազմի  
խորհրդային իշխանության տըն-  
տեսական քաղաքականության մո-  
տավոր խնդիրը և կարող և իրա-  
գործվել միայն սերտ կառ պահ-  
պանելով արհեստակցական միու-  
թյունների հետ։ Ամբողջ աշխա-

տունակ բնակչության գլխառվին մորիւիզացիան խորհրդային իշխանության կողմից, արնեստակցական միությունների մասնակցությունը վորոշ հասարակական աշխատանքներ կատարելու համար, պետք է ավելի լայն ու ավելի սիստեմորեն կիվառվի, քան այդ արվել ե մինչև որս:

Ե) Աշխատանքի կապիտալիստական կազմակերպության քայլայման պայմաններում, յերկրի արտադրողական ուժերը կարող են վերականգնել ու զարգանալ, և արտադրության սոցիալիստական յեղանակը կարող է ամրանալ միայն աշխատավորների ընկերական դիսցիպլինայի, նրանց մաքսիմալ ինքնագործունեյության, պատասխանատվության դգացմունքի և աշխատանքի արդյունավետության փոխադարձ

ամենախիստ վերահսկողության հիմունքների վրա:

Այդ նպատակի իրագործումը համառ սիստեմատիկ աշխատանք ե պահանջում մասսաների վերադաստիարակման գործում, վորոշությացված և այժմ հենց շնորհիվ նրա, վոր մասսաները իրականում տեսնում են կապիտալիստի, կալվածատիրոջ և վաճառականի հեռացվելը և սեփական պրակտիկայի փորձով գալիս են այն համոզման, վոր իրենց բարեկեցությունը կախված է բացառապես իրենց սեփական աշխատանքի դիսցիպլինայից:

Նոր սոցիալիստական դիսցիպլինայի ստեղծման այս գործի մեջ գլխավոր դերն ընկնում է արնեստակցական միությունների վրա: Վերջիններս, հրաժարվելով հին շարլոնից, այդ նպատակի

իրագործման համար պետք ե  
գործադրեն ու փորձեն տարբեր  
միջողներ, ինչպես, որինակ՝ հաշ-  
վետվություն սահմանել և մը-  
շակման նորմեր, հատուկ, ընկե-  
րական բանվորական դատարան-  
ների առաջ պատասխանատվու-  
թյան կանչել և այլն:

զ) Արտադրական ուժերի զար-  
գացման նույն նպատակը պա-  
հանջում ե անհապաղ, լայնորեն  
և բազմակողմանի ոգտագործել  
գիտության և տեխնիկայի կա-  
պիտալիզմից մեզ ժառանգու-  
թյուն թողած մասնագետներին,  
չնայած նրան, վոր սրանք մեծ  
մասամբ անխուսափելիորեն տո-  
գորված են բուրժուական աշ-  
խարհայեցողությամբ ու սովո-  
րություններով: Կուսակցությու-  
նը վերջացած ե համարում այս  
շերտի հետ սուր պայքարի շրջա-

նը, վոր առաջ եր յեկել նրանց  
կազմակերպած սաբուտաժի շնոր-  
հիվ. վորովհետև այդ սաբուտաժն  
ընդհանրապես հաղթահարված եւ  
կուսակցությունը սերտ կապ  
պահպանելով արհետակցական  
միությունների հետ պետք ե ա-  
ռաջ տսնի իր նախկին գիծը. մի  
կողմից ամենափոքր քաղաքական  
զիջում անգամ չանել բուրժու-  
ական այդ խավին և անխնայո-  
ղաբար ձնշել նրա հականեղափո-  
խական ամեն տեսակի վոտնձու-  
թյունները, իսկ մյուս կողմից  
նույնքան անխնայողաբար կովել  
այն կեղծ-արմատական, բարց  
իրոք գուեհիկ մեծամտության  
դեմ, վոր իրը աշխատավորները  
կարող են հաղթահարել կապի-  
տալիզմն ու բուրժուական կար-  
գերը առանց բուրժուական մաս  
նագետներից սովորելու, առանց

Նրանց ոգտագործելու, առանց  
աշխատանքի յերկարատև դպրոց  
անցնելու նրանց հետ:

Զգտելով ամեն մի աշխատան-  
քի վարձատրության հավասա-  
րեցման ու լիակատար կոմմու-  
նիզմի, խորհրդային իշխանու-  
թյունը չի կարող անմիջական  
նպատակ դնել իրագործել այդ  
հավասարեցումը ներկա վայր-  
կյանին, յերբ միայն կապիտալիզ-  
մից կոմմունիզմին անցնելու ա-  
ռաջին քայլերն են արգումենտա-  
տի մի վորոշ ժամանակ պետք ե-  
ղեռ պահել մասնագետների ավելի  
բարձր վարձատրությունը, վոր-  
պեսզի նրանք աշխատեն վոչ թե  
պիտի վատ, այլ ավելի լավ, քան  
առաջ: Եռայն նպատակով չի կա-  
րելի նաև հրաժարվել պրեմիա-  
ների սիստեմից՝ ամենահաջող և  
հատկապես կազմակերպչական աշ-

խատանքի համար:

Նմանապես անհրաժեշտ ե ըս-  
տեղծել բուրժուական մասնագետ  
ների համար ընկերական ընդհա-  
նուր աշխատանքի պայմաններ՝  
ձեռք ձեռքի տված շարքային  
բանվորների մասսայի հետ, զի-  
տակից կոմմունիստների ղեկա-  
վարությամբ, և այսպիսով նպաս-  
տել կապիտալիզմի շնորհիվ իրա-  
րից բաժանված ֆիզիկական և  
մտավոր աշխատավորների փո-  
խադարձ հասկացողությանն ու  
մերձեցմանը:

յե) Խորհրդային իշխանությու-  
նըն արդեն մի շարք միջոցներ ե  
ձեռնարկել վորոնք նպատակ ու-  
նեն զարգացնելու գիտությունը  
ու մոտեցնելու այն արտադրու-  
թյան: Ստեղծվել ե մի ամբողջ  
ցանց նոր գիտական-գործնական  
ինստիտուտների, լաբորատորիա-

ների, փորձակայանների, նոր տեխնիկական մեթոդների, կատարելագործումների և գյուտերի ստուգման փորձնական ձեռնարկների, բոլոր գիտական ուժերի ու միջոցների հաշվառում ե կազմակերպվում և այլն։ Համ. Կ. Կ. պաշտպանելով բոլոր այդ միջոցները՝ ձգտում ե նրանց հետազազարգացմանը և յերկրի արտադրական ուժերի աճման հետ միասին՝ գիտական աշխատանքի համար ամենանպաստավոր պայմաններ ստեղծելուն։

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՐՈՒՄ

16) Խորհրդային իշխանությունը զլուխ բերելով հողի մասնավոր սեփականատիրության լիակատար վերացումը՝ անցել ե արդեն մի շարք միջոցների կենսա-

գործման, վորոնց նպատակն ե խոշոր սոցիալիստական հողագործության կազմակերպումը։ Այդ միջոցներից ամենակարևորներն են։

1) Խորհրդային տնտեսությունների, այսինքն՝ խոշոր սոցիալիստական տնտեսությունների կազմակերպումը. 2) աջակցություն հողի հասարակական մշակման ինչպես հասարակություններին նույնպես և ընկերություններին. 3) պետական ցանքսի կազմակերպումը բոլոր չցանված հողերում, ում ել նրանք պատկանեն. 4) բոլոր ագրոնոմիական ուժերի պետական մորիլիզացիայի հուանդուն միջոցներով՝ գյուղատնտեսական կուլտուրայի բարձրացման համար. 5) աջակցություն գյուղատնտեսական կոմունաներին, վորոնք խոշոր հա-

վաքական տնտեսություն վարող հողագործների միանգամայն հոժարակամ միություններ են:

Բոլոր այդ միջոցները գյուղատնտեսական աշխատանքի արագողականության բացարձակ անհրաժեշտ բարձրացման միակ ճանապարհ համարելով՝ Համ. կ. կ. ձգտում ե ըստ կարելույն լիակատար կերպով կենսագործել այդ միջոցները, տարածել նրանց յերկրի ամենից յետ մնացած շրջան ներում և զիմում ե նույն նպատակով առաջիկայում արգելվք քայլերին:

Համ. կ. կ. առանձնապես ձըգտում ե՝ 1) գյուղատնտեսական մթերքների վերամշակմամբ ըղբաղված գյուղատնտեսական կոռպերացիայի բազմակողմանի պետական աջակցություն.

2) հողի բարելավման (մելիո-

բացիայի) սիստեմի լայն իրագործման.

3) վարձատու կայանների միջոցով չքավոր և միջակ գյուղացիության ինվենտարի լայն ուղանաչափ մատակարարման:

Հաշվի առնելով այն հանգամանքը, վոր մանր գյուղացիական տնտեսությունը դեռ յերկար պիտի գոյություն ունենա՝ Համ. կ. կ. ձգտում ե իրագործել միջոցներ, վորոնց նպատաշարն ե բարձրացնել գյուղացիական տնտեսության արտադրողականությունը: Այդ միջոցներն են՝ 1) գյուղացիական հողողտագործման կարգավորումը (հողերի ցըգածության, հեռավորության և այլն վերացումը), 2) գյուղացիներին աղնվացրած հացահատիկներ և արհեստական պարագատան ութեալ մատակարարելը,

3) գյուղացիական անասունների տեսակի ազնվացումը, 4) ագրոնոմիական գիտելիքներ տարածելը, 5) գյուղացիներին ազրոնումիական ոգնություն հասցնելը, 6) գյուղացիների ինվենտարի նորոգումը խորհրդային արհեստանոցներում, 7) վարձատու կենտրոնների, փորձակայանների, ցուցադաշտերի կազմակերպումը, 8) գյուղացիական հողերի մելիքացիան:

17. Ինկարի ունենալով, վորքաղաքի և գյուղի հակագրությունը գյուղի տնտեսական և կուլտուրական հետամնացության ամենախոր հիմքերից մեկն և, իսկ դա ներկայումս գոյություն ունեցող սուր ճգնաժամին, թեքաղաքը և թե գյուղն այլասերման և կործանման անմիջական վտանգի առաջ և դնում՝

Համ. Կ. Կ. այդ հակագրության վոչնչացման մեջ և տեսնում կոմմունիատական շինարարության հիմնական խնդիրներից մեկը և, ընդհանուր միջոցներից բացի, անհրաժեշտ և գտնում՝ արդյունաբերական բանվորներին լայնորեն և պլանաչափ առաջ քաշել գեպի հողագործական կոմմունիստական շինարարությունը՝ նույն նպատակներով խորհրդային իշխանության կողմից արդեն հիմնած համապետական «Բանվորական աջակից կոմիտեյի» գործունեյության զարգացումը և այլն:

18. Գյուղում իր ամբողջ աշխատանքում՝ Համ. Կ. Կ. առաջվա պես հենվում և նրա պրոլետարական և կիսապրոլետարական շերտերի վրա, կազմակերպում և դրանց նախ և առաջ վորպես ինքնուրույն ուժ՝ ստեղ-

ծելով գյուղում կուսակցական  
բջիջներ, չքավոր գյուղացիների  
կազմակերպություններ, գյուղի  
պրոլետարների ու կիսապրոլե-  
տարների առանձին տիպարի ար-  
հեստակցական միություններ, և  
այլն՝ բոլոր միջոցներով մերձեց-  
նելով նրանց քաղաքի պրոլետա-  
րիատին և պոկելով նրանց գյու-  
ղական բուրժուազիայի ու մանր  
սեփականատիրական շահերի աղ-  
փեցությունից:

Կուլտակների՝ գյուղական բուր-  
ժուազիայի վերաբերմամբ՝ Համ.  
Կ. Կ. քաղաքականությունն եռ-  
վճռական պայքար մղել նրանց  
կեղեքիչ ձգտումների դեմ, ձնշել  
նրանց դեպի խորհրդացին քա-  
ղաքանությունը ցույց տված դի-  
մադրությունը:

Միջին գյուղացիության նկատ-  
մամբ՝ Համ. Կ.Կ. քաղաքականու-

թյունն և նրան աստիճանաբար  
և պլանաչափ կերպով գրավել սո-  
ցիալիստական շինարարության  
աշխատանքներին։ Կուսակցու-  
թյունը ձգտում է անջատել նրան  
կուլտակներից, քաշել բանվոր դա-  
սակարգի կողմը՝ ցույց տալով  
ուշադիր վերաբերմունք դեպի  
նրա կարիքները, պայքարելով  
նրա հետամնացության գեմ վոչ  
թե ձնշման միջոցներով, այլ գա-  
ղափարական ներգործությամբ,  
ձգտելով ամեն պարագաներում,  
վորտեղ նրա կենսական շահերն  
են շոշափվում, գործնական հա-  
մաձայնության գալ նրա հետ,  
զիջումներ անելով նրան կյանքի  
սոցիալիստական վերակառուց-  
ման յեղանակների վորոշման մեջ։

ԲԱՇԽՄԸՆ ԲՆՍԳԱՎԱՌՈՒՄ

19. Բաշխման ընագավառում  
ներկայումս խորհրդացին իշխա-

Նության նպատակն ե՞ անշեղ  
կերպով շարունակել առևտրի փո-  
խարինումը մթերքների պլանա-  
չափ, համապետական մասշտա-  
բով կազմակերպված բաշխումով։  
Նպատակ ե դրվում ամբողջ բը-  
նակչությունն ընդգրկել սպառո-  
ղական կոմմունաների միասնա-  
կան ցանցով, վոր ամենայն արա-  
գությամբ, պլանաչափությամբ,  
խնայողությամբ և աշխատանքի  
նվազագույն գործադրմամբ պետք  
ե կարողանան բաշխել բոլոր ան-  
հրաժեշտ մթերքները՝ խստորեն  
կենտրոնացնելով բաշխման ամ-  
բողջ ապահովատը։

Սպառողական կոմմունաների  
և նրանց մէռությունների հիմքում  
պետք ե դրված լինի գոյություն  
ունեցող համաքաղաքացիական և  
բանվորական կոոպերացիան, վոր  
սպառողների մեծագույն կազմա-

կերպությունն ե և կապիտալիզ-  
մի պատմության ընթացքում ա-  
մենից շատ նախապատրաստված  
մասսայական բաշխման ապահ-  
ուատն ե։

Սկզբունքորեն միակ ուղիղը  
համարելով կոոպերատիվ ապահ-  
ուատի հետագա կոմմունիստական  
գարգացումն այս ուղղությամբ և  
վոչ թե նրան մի կողմ նետելը՝  
չամ, կ. կ. սիստեմորեն պետք ե  
շարունակի իր քաղաքականու-  
թյունը. նա պետք ե պարտավո-  
րեցնի կուսակցության բոլոր ան-  
գամներին աշխատել կոոպերա-  
տիվներում, ար և ես տ ա կց ա կան  
միությունների աջակցությամբ՝  
կոմմունիզմի վոգով պետք ե ուղ-  
ղություն տա սրանց. պետք ե  
գարգացնի կոոպերացիայի շուր-  
ջը կազմակերպված աշխատավոր-  
քնակչության ինքնազործունե-

յությունը և կարգապահությունը, ջանք թափի, վորաբեսզի ամբողջ բնակչությունը ընդգրկվի կոռպերատիվների ցանցով, և վորապես զի այդ կոռպերատիվները ձուլվն մի ընդհանուր՝ վերից մինչև վար ամբողջ Խորհրդային Հանրապետությունն ընդգրկող կոռպերատիվի մեջ. վերջապես, վոր ամենագլխավորն ե, նա պետք է աշխատի ապահովել պրոլետարիատի մնայուն գերակշռող աղղեցությունը աշխատավորների մնացած շերտերի հանդեպ և գործնական ճանապարհով փորձել ամենուրեք տարբեր միջոցներ, վոր հեշտացնում են և իրագործում հին կապիտալիստական տիպի մանր բուրժուական կոռպերատիվների փոխանցումը՝ պրոլետարիատի և կիսապրոլետարիատի դե-

կավարության ներքո գտնվող սպառողական կոմմունաների։  
ՓՈՂԱՅԻՆ ՅԵՎ ԲՈՆԿՈՅԻՆ  
ԳՈՐԾԻ ԲՆԱԴԱՎԱՌՈՒՄ

20. Խուսափելով Պարիզի կոմմունայի գործած սխալներից՝ խորհրդային իշխանությունը Ռուսաստանում միանգամից գրավեց պետական բանկը, ապա անցավ մասնավոր առետրական բանկերի, ազգայնացման, ձեռնարկեց ազգայնացրած բանկերի, խնայողական գանձարկղների և պետական գանձատների միացմանը պետական բանկի հետ, արդպիսով նա ստեղծեց Խորհրդային Հանրապետության միասնական ժողովրդական բանկի կմախքը և բանկը ֆինանսական կապիտալի տիրապետության տնտեսական կենտրոնից ու շահագործողներից

քաղաքական տիրապետության գործիքից՝ բանվորական իշխանության գործիք ու տնտեսական հեղաշրջման լծակ դարձրեց։ Նըպատակ դնելով խորհրդային իշխանության սկսած գործի հետևողական ավարտումն առաջիկաւում՝ Համ. կ. կ.առաջին հերթին առաջ և քաշում հետեւյալ սկզբունքները.

ա) Ամբողջ բանկային գործի մոնոպոլիզացիան Խորհրդային պետության ձևոքում։

բ) Բանկային ոպերացիաների արմատական փոփոխումն ու պարզեցումը՝ բանկային ապահարատը Խորհրդային Հանրապետության միակերպ հաշվառման և ընդհանուր հաշվապահության ապահարատ դարձնելով։ Պահանջափառ հասարակական տնտեսության կարյակերպման ընթացքում դա կը-

վոչնչացնի բանկը՝ վերածելով այն կոմմունիստական հասարակության կենտրոնական մի հաշվապահության։

21. Կատիտալիզմից կոմմունիզմի փոխանցման առաջին շրջանում, քանի գեռ լիովին չեկազմակերպված մթերքների կոմմունիստական արտադրությունը և բաշխումը, փողի վոչնչացումը հնարավոր չե։ Այդ պայմաններում բնակչության բուրժուական տարրերը շարունակում են ոգտագործել մասնավոր սեփականություն կազմող դրամանիշները՝ սպեկուլյացիայի, հարստացման և աշխատավորներին կողոպտելու նպատակներով։ Հենվիլով բանկերի ազգայնացման վրա, Համ. կ. կ. ձգտում և կիրառել մի շարք միջոցներ, վոր ընդլայնում են անփող հաշիվն ու նա-

խապատարաստում փողի վոչըն-  
չացումը—փողի պարտագիր պա-  
հումը ժողովրդական բանկում,  
բյուջետային գրքույկների գոր-  
ծադրումը, փողի փոխարինումը  
չեկերով, մթերքներ ստանալու  
իրավունք տվող կարճատև տոմ-  
սերով և այլն:

### ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՐՈՒՄ

22. Կապիտալիստներից խլած  
արտադրական միջոցների հան-  
րայնացման դարաշրջանի առա-  
ջին մոմենտից սկսած՝ պետական  
իշխանությունը դադարում է ար-  
տադրական պրոցեսսին գերադաս՝  
պարզիտական ապահարատ լի-  
նել. Նա սկսում է վերածվել մի  
կազմակերպության, վոր անմի-  
ջապես իրագործում է յերկրի  
տնտեսության ղեկավարությու-  
նը և նույն չափով ել պետական

բյուջեն դառնում ե ժողովրդա-  
կան բովանդակ տնտեսության  
բյուջե:

Այս պայմաններում յեկամուտ  
ների և ծախսերի հաշվելշին  
իրագործելի յե միայն պետական  
արտադրության արդյունքների  
պլանաչափ և բաշխման ուղիղ  
կազմակերպման պայմանով: Իսկ  
ինչ վերաբերում ե անցողական  
շրջանում անմիջական պետական  
ծախքերը ծածկելուն՝ Համ. Կ. Կ.  
պետք ե պաշտպանի սոցիալիս-  
տական հեղափոխության առաջին  
շրջանում կապիտալիստների վրա  
դրած պատմականորեն անհրա-  
ժեշտ և որինավոր կոնտրիբու-  
ցիաների սրստեմի փոխարինու-  
մը՝ պրոգրեսիվ յեկամտային և  
գույքային հարկով: Իսկ վորչափ  
այդ հարկը վերանում ե ինքն  
իրեն, շնորհիվ ունկոր դաստկար-

գերի նկատմամբ լայնորեն դործ ադր ված եքսպրոպրիացիայի, պետական ծախքերը պետք և ծած կել այլեայլ պետական մենաշընորհներից ստացած յեկամուտներից:

### ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԳԱՎԱՌՈՒՄ

23) Զգտելով լուծել պատերազմի ընթացքում առանձնապես սրված բնակարանային հարցը՝ խորհրդային իշխանությունը լիովին խլել ե կապիտալիստական տնատերերին պատկանող բոլոր տները և հանձնել այն քաղաքացին խորհուրդներին. քաղաքի ծայրամասերի բանվորներին մաս սայաբար տեղափոխել ե բուրժուական տները. այդ տներից լավագույնները տվել ե բանվորական կազմակերպություննե-

րին՝ պետության վրա առնելով այդ շինությունների պահպանությունը. ձեռնարկել ե բանվորական ընտանիքներին կահկարամիներով ապահովելուն և այն:

Համ. է. կ. նպատակն ե՝ ընթանալով վերոհիշյալ ուղիով և բնավ չշոշափելով վոչ-կապիտալիստ տնատերերի շահերը՝ բոլոր ուժով ձգտելու յե աշխատավոր մասսաների բնակարանային պայմանների բարելավման. հին քաղաքամասերի բնակչության կուտակումի և հակաառողջապահական պայմանների վերացման, անպետք բնակարանների վոչնչացման, հների վերաշինության, նորերի շինության բանվորական մասսաների կյանքի նոր պայմաններին համապատասխան, աշխատավորների նպատակահարմար տեղափորման:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊՈՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՅԵՎ ՍՈՅԻԾԱԼՈԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒ-  
ԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՐՈՒՄ

24) Պրոլետարիատի դիկտա-  
տուրայի հաստատումով՝ առաջին  
անգամն եւ, վոր հնարավորություն  
և ստեղծվում լիովին իրազուժե-  
լու սոցիալիստական կուսակցու-  
թյան ծրագրի մինիմումն՝ աշխա-  
տանքի պաշտպանության բնա-  
գավառում:

Խորհրդային իշխանությունն  
որենսդրական կարգով անց ե  
կացը ել և «Աշխատանքի որենք-  
ների կողեքսում» հաստատել ե  
բոլոր աշխատավորների համար  
ութեամյա բանվորական որ, վոր-  
պես աշխատանքի մաքսիմալ ժա-  
մանակ. ընդումին՝ արտադրու-  
թյան առանձնապես վնասակար  
ճյուղերում, 18 տարեկան հասա-

կին չհասած անձանց, այլև հողի  
տակ զբաղված լեռնարդյունաբե-  
րական բանվորների բանվորա-  
կան որը 6 ժամից չպետք է ան-  
ցնի. բոլոր աշխատավորների հա-  
մար շաբաթական 42 ժամվա ան-  
ընդհատ հանգիստ: Արգելվում ե  
արտաժամյա աշխատանքների  
կատարումը վորպես ընդհանուր  
կանոն. արգելում մանուկների և  
մինչև 16 տարեկան դեռահամնե-  
րի աշխատանքից ոգտվելուց, գի-  
շերային աշխատանքի և արտա-  
դրության առանձնապես վնասա-  
կար ճյուղերում աշխատելու, այլև  
արգելվում ե արտաժամյա աշխա-  
տանքը՝ կանանց սեռին պատկա-  
նող բոլոր անձանց և 18 տարե-  
կանը չհասած արական սեռի ան-  
ձանց համար. կանանց հանգիստ  
8 շաբաթ ծննդաբերությունից  
առաջ և 8 շաբաթ ծննդաբերու-

թյունից հետո աշխատավարձի անընդհատ և լիակատար պահումով և բժշկական ու դեղորայքի ձրի ոգնություն, այլև յուրաքանչյուր յերեք ժամից հետո բանվորուհիներին կես ժամից վոչ պակաս ժամանակ մանկան կերակրելու համար ու լրացուցիչ նպաստ կերակրող մայրերին. ար հեստակցական միությունների խորհուրդներից ընտրված աշխատանքի ինսպեկցիա և սանրուրական ինսպեկցիա:

Խորհրդային իշխանությունն որենսդրական կարգով անց ե կացրել ուրիշի աշխատանքը չը շահագործող բոլոր աշխատավորների լիակատար սոցիալական ապահովագրություն և բոլոր տեսակի աշխատունակությունը կորցըրածների ապահովագրություն և, աշխաըհումս առաջին անգամ,

ապահովագրություն գործազրկությունից՝ ինաշխվ վարձողների և պետության, ապահովագրվածների լիակատար ինքնավարությամբ և արհեստակցական միությունների լայն մասնակցությամբ:

Ավելի քան այդ՝ խորհրդային իշխանությունը վորոշ տեսակետից ծրագիր-մինիմումից դենն ե անցել և նույն «Աշխատանքի որենքների կողեքսում» սահմանել և բանվորական կազմակերպությունների մասնակցությունը վարձելու և արձակման հարցեր լուծ լու մեջ. մի տարուց վոչ պակաս անդադար աշխատած բոլոր աշխատավորներին միտմայա արձակուրդ՝ ոռնկի վերապահումով. աշխատավարձի պետական կանոնավորում՝ արհեստակցական միությունների մշակած տարիքների հիմունքով. վորոշ

որդաններ, այն ե՛ արհեստակցական միություններին և նրանց խորհուրդներին կից բաշխման և հաշվառման բաժանմունքներ, վորոնք պարտավոր են գործ հայթայթել գործազուրկներին:

Սակայն պատերազմի առաջացըրած ծայրահեղ ավերածությունները և համաշխարհային իմպերիալիզմի գրոհը՝ հարկադրել են խորհրդային իշխանությանը հետևյալ շեղումներն անել, թույլ տալ արտաժամյա աշխատանք կիրառել բացառիկ պայմաններում, սահմանափակելով այն տարեկան 50 որով. թույլատրել 14-ից մինչև 16 տարեկան դեռահասների աշխատանքը, սահմանափակելով նրանց աշխատանքի որը 4 ժամով. միաժամյա արձակուրդի փոխարեն տալ առ այժմ յերկու շաբաթվա արձակուրդ, յերկա-

րացնել գիշերային աշխատանքների տեսողությունը մինչև 7 ժամ։ Համ. կ. կ. պետք ե լայն պրոպագանդա մղի՝ աշխատանքի պաշտպանության բնագավառում ձեռնարկած բոլոր միջոցները յ' ուսնողուն կերպով իրականացնելու համար աշխատավորների գործոն մասնակցությունը յերեվան բերի. այդ նպատակով անհրաժեշտ ե՝

ա) ուժեղացնել աշխատանքի ինսպեկցիայի կազմակերպության և ընդարձակման գործը՝ բանվորների միջից գործոն աշխատակիցների ընտրության և նախապատրաստության միջոցով, ուժեղացնել աշխատանքի ինսպեկցիան մասը և անային արդյունաբերության վրա տարածելու գործը։  
բ) տարածել աշխատանքի պաշտպանությունն աշխատանքի բո-

լոր տեսակների վրա (կառուցող բանվորների, ցամաքային և ջրային տրանսպորտի, տնային ծառայողների և զյուղատնտեսական բանվորների):

գ) վերջնականապես աշխատանքից հանել փոքրահասակներին և շարունակել դեռահասների բանվորական որվա կրծատումը:

Բացի այդ, Համ. Կ. Կ. պետք է ձգտի սահմանել՝

ա) առաջիկայում, աշխատանքի արտադրողականության ընդհանուր բարձրացման դեպքում՝ ճժամյա մաքսիմալ բանվորական որ, առանց աշխատավարձի նըլվագեցման, պարտավորեցնելով աշխատավորներին դրանից զատ՝ առանց առանձին վարձատրության, հատկացնել յերկու ժամարհեստի և արտադրության տեսառությանը, պետական վարչության

թյան տեխնիկայի գործնական ուսուցմանը և զինվորական արվեստին.

բ) աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար վարձատրության խրախուսիչ սիստեմ մացնել:

Սոցիալական ապահովության ընագավառում Հոմ. Կ. Կ. ձգտում ե լայն պետական ոգնություն կազմակերպել վոչ միայն պատերազմի և տարերային դժբախտությունների զոհերի, այլև հասարակական աննորմալ հարաբերությունների զոհերի համար. վըճռական պայքար ե մղում ամեն տեսակի մակարուծության (պարագիտության) ու ձրիակերության դեմ և նպատակ ե դնում գեպի աշխատավորական կյանքը վերադարձնել յուրաքանչյուրին,

վոր դուրս ե ընկել աշխատանքի  
ասպարեզից:

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒՄ-  
ՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

25) Ժողովրդական առողջապա-  
հության բնագավառում Համ. Կ.  
Կ. իր գործունեյության հիմք ե  
ընդունում ամենից առաջ առող-  
ջարար և սանիտարական մի շարք  
միջոցների գործադրությունը,  
վոր նպատակ ունի կանխել հի-  
վանդությունների զարգացումը:  
Պրոլետարիատի գիտատուրան  
արդեն հնարավորություն ե տը-  
վել կենսագործելու մի շարք ա-  
ռողջապահական և բուժական մի-  
ջոցներ, վորոնք անիրագործելի-  
յեն բուրժուական հասարակու-  
թյան շրջանակներում՝ դեղագոր-  
ծության, խոշոր մասնատիրական  
բուժարանների, կուրորտների աղ-

գայնացում, բժշկական աշխատա  
վորների պարտադիր աշխատանք  
և այլն:

Սրան համապատասխան Համ.  
Կ. Կ. իրեն մոռավոր նպատակ ե  
դնում՝

ա) վճռականորեն գործադրել հո-  
գուտ աշխատավորների մի շարք  
աանիտարական միջոցներ, ինչ-  
պես՝

I. բնակելի վայրերի առողջա-  
ցումը (խնամք հողի, ջրի և ողի  
մասին):


II. հասարակական սննդի կազ-  
մակերպումը գիտական առողջա-  
պահական հիմքերով,

III. վարակիչ հիվանդություն-  
ների զարգացումն ու տարածմը  
կանխող միջոցների կազմակեր-  
պումը.

IV. ստեղծել սանիտարական  
որենսդրություն.

բ) պայքար սոցիալական հիվան  
դությանների դեմ (խօփախա, վե  
ներական ախտեր, արբեցողու-  
թյուն և այլն).

գ) հանրամատչելի, ձբի և վո-  
րակյայ բուժական ու դեղային  
ոգնության տպահովումը:



## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՄՈՒ-  
ՆԻՍՏԱԿԱՆ (Բոլլեկվիկների)  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ



# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՍՏԻՈՒԹԵՆԱԿԱՆ

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ

(բոլենվիկների)

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

Կոմմունիստական ինտերնացիո-  
նալի սեկցիա

Ընդունված ՀամԿ (թ) Կ XIV համագու-  
մարում

(Դեկտեմբերի 18—31 1925 թ.)

1 ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ-  
ՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Կուսակցության անդամ հա-  
մարվում է ամեն վոք, ով ընդու-  
նում է կուսակցության ծրագի-  
րը, աշխատում է նրա կազմակեր-  
պություններից վորևս մեկում,  
յինթարկվում է կուսակցության  
վորոշումներին և անդամավճար ե-  
տալիս:

2. Նոր անդամներն ընդունվում են այն թեկնածուներից, վորոնք անցել են քաղաքական գրագիտության դպրոցը և սահմանված թեկնածուական ստաժը:

Թեկնածությունից կուսակցության անդամ ընդունելու կարգը հետևյալն է.

ա) Սահմանվում ե յերեք կատեգորիա՝

1) բանվորներ և բանվորների ու գյուղացիների շարքերից դուրս յեկած կարմիր բանակայիններ.  
2) գյուղացիներ (բացի կարմիր բանակայիններից), տնայնագործներ, վորոնք ուրիշի աշխատանքը չեն շահագործում, և 3) այլք (ծառայողներ և այլն):

Առաջին կատեգորիան բաժանվում ե յերկու խմբի:

Առաջին կատեգորիայի առաջին խմբի մեջ են մտնում այն

արդյունաբերական բանվորները, վորոնք անընդհատ զբաղված են վարձու ֆիզիկական աշխատանքով:

Առաջին կատեգորիայի յերկրորդ խմբի մեջ են մտնում վոչարդյունաբերական բանվորները բանվորների և գյուղացիների շարքերից դուրս յեկած կարմիր բանակայինները և բատրակները:

բ) Կուսակցության մեջ ընդունվելու համար առաջին կատեգորիայի առաջին խմբին պատկանողները ներկայացնում են մեկ տարվա կուսատաժ ունեցող յերկու կուսանդամի յերաշխավորություն. առաջին կատեգորիայի յերկրորդ խմբի անձնավորությունները՝ յերկու տարվա կուսատաժ ունեցող յերկու կուսանդամի յերաշխավորություն. յերկրորդ կատեգորիայի անձնավոր

ըությունները՝ յերկու տարվա կուստաժ ունեցող յերեք կուսանդամի յերաշխավորություն. յերբորդ կատեզորիայի անձնավորությունները՝ հինգ տարվա կուստաժ ունեցող հինգ կուսանդամի յերաշխավորություն:

Ծանոթություննից առաջին և յերկորդ կատեզորիայով կուսակցութ. անդամ ընդունելիս՝ Համ ԼԿՅԵՄ կոմիտեի յերաշխավորությունը հավասարվում է կուսակցության սեկ անդամի յերաշխավորությանը:

գ) Այլ կուսակցություններից յելածներն ընդունվում են բացառիկ դեպքերում հինգ տարվա կուստաժ ունեցող հինգ կուսանդամի յերաշխավորությամբ, վոչ այլ կերպ քան արտադրական քջջի միջոցով և անպայման կենտկոմի հաստատությամբ, անկախ

ընդունվողի սոցիալական դրությունից:

Ծանոթություն. Այլ կուսակցություններից յելածների վերջնական հաստատման իրավունքը կենտկոմը կարող ե վերապահել առանձին յերկրային կուսակցական կոմիտեների և ազգային կոմիտեների կենտրոնականին:

դ) Յերաշխավորությունների ստուգումը նախորդում ե ընդունելուն և կատարվում ե տեղական կուսակցական կոմիտեյի միջոցով:

ե) Կուսակցության մեջ ընդունվելու հարցը նախապես քըննըվում ե բջջում, վճռվում ե կազմակերպության ընդհանուր ժողովում և ուժի մեջ ե մտնում կուսկոմի հաստատումից հետո. առաջին կատեզորիայի համար պահանջվում ե գավկոմի ու ուսյումի (քաղաքներում և արդյու-

նաբերական կենտրոններում) հաս  
տատումը, յերկրորդի և յերրոր-  
դի համար՝ շրջանային (ՕԿԲ.) կամ  
նահանգական կոմիտեյի հաստա-  
տումը: Քաղաքների ու յոնական  
կազմակերպություններում կու-  
սակցության մեջ ընդունելու հար-  
ցը վճռվում է կուսակցության  
անդամների ընդհանուր ժողովում:  
Քաղաքային ու յոններում հաղա-  
րից ավելի անդամ և թեկնածու  
լինելու դեպքում ընդունելու-  
թյունը կատարվում է ու այկոմի  
պլենումում առանց ընդհանուր  
ժողովի սանկցիայի:

գ) Յերիտասարդությունը մին-  
չև 20 տարեկան հասակը ներառ-  
յալ (բացառությամբ կարմիր բա-  
նակայինների) կուսակցության  
մեջ և մանում միմյան չամկեթեմ  
միջոցով:

3. Յերաշխավորուկները պա-

տասխանատու յեն յերաշխավո-  
րածների համար և անհիմն յե-  
րաշխավորություններ տալու դեպ  
քում յենթարկվում են կուսակ-  
ցական տուժի, մինչև կուսակ-  
ցությունից վտարվելը:

4. Թեկնածությունից կուսակ-  
ցության անդամ ընդունվողի  
կուսատաժը հաշվում ե այն որից  
յերբ համապատասխան բջջի ընդ-  
հանուր ժողովը վորոշում է տըլ-  
յալ ընկերոջ հաստատել կուսակ-  
ցության անդամ:

5. Մի կազմակերպության յու-  
րաքանչյուր անդամ այլ կազմա-  
կերպության աշխատանքի վայրը  
փոխադրվելու դեպքում գրանց-  
վում է վերջնիս անդամների  
թվում:

Ծանոթություն. Կուսակցու-  
թյան անդամների մի կազմակերպու-  
թյունից մյուսը փոխադրվելը կա-

տարվում ե կուսակցության կենտ-  
կոմի սահմանած կանոնների համա-  
ձայն:

6. Վորևե մեկին կուսակցու-  
թյունից վտարելու հարցը վճռո-  
վում ե այն կազմակերպության  
ընդհանուր ժողովում, վորի ան-  
դամ ե տվյալ անձը, և հաստատ-  
վում ե նահանգական (շրջանային)  
վերահսկիչ հանձնաժողովում, կամ  
լուծվում ե անմիջորեն նահան-  
գական (շրջանային) վերահսկիչ  
հանձնաժողովում։ Վտարման վո-  
րոշումն ուժի մեջ ե մտնում նա-  
հանգական (շրջանային) կոմիտե-  
յի հետ վորոշումը համաձայնեց-  
նելուց հետո միայն, ընդ վորում  
ընդհանուր ժողովի կամ նահան-  
գական վէ (շրջ վէ) կողմից վր-  
տարվելու որվանից տվյալ անձը  
հեռացվում ե կուսակցական աշ-  
խատանքից։ Կուսակցությունից

վտարված անդամների վտարման  
մասին հայտարարվում ե կուսակ-  
ցական մամուլում՝ նշելով վտար-  
ման պատճառները։

II. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՈՒ-  
ԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

7. Բոլոր այն անձնավորու-  
թյունները, վորոնք ցանկանում  
են կուսակցության անդամի շար-  
քերն անցնել, անցնում են թեկ-  
նածուական ստաժ, վորի նպա-  
տակն են նրանց հիմնավորապես  
ծանոթացնել կուսակցության ծր-  
բագրի և տաւաֆիկայի հետ և ըս-  
տուգել թեկնածուի անձնական  
հատկությունները։

8. Թեկնածուներ ընդունելու  
կարգը (կատեգորիաների բաժա-  
նելը, յերաշխավորությունների  
ընույթն ու ստուգումը, կազմա-  
կերպության վորոշումը ընդու-

նելու և կուսկոմից հաստատվելու  
մասին) նույնն է, ինչ վոր կու-  
սակցության անդամ ընդունվելու  
գեպօւմ:

9. Թեկնածուական ստաժը սահ-  
մանվում է.—առաջին կատեգո-  
րիայի համար 6 ամսից վոչ պա-  
կաս, յերկրորդ կատեգորիայի հա-  
մար՝ 1 տարուց վոչ պակաս և  
յերրորդ կատեգորիայի համար՝ 2  
տարուց վոչ պակաս:

Ծանոթություն—Ռուբէ կու-  
սակցություններից յելածները, ան-  
կախ նրանց սոցիալական դրությու-  
նից՝ անցնում են յերկու տարվա  
թեկնածուական ստաժ.

10. Կուսանդամության թեկ-  
նածուները մասնակցում են այն  
կազմակերպության դռնբաց ժո-  
ղովներին վորի կազմում գտնը-  
վում են: Կուսանդամության թեկ-  
նածուները կուստողովներում վըն-  
սական ձայնի իրավունք չունեն,

այլ մասնակցում են միայն խոր-  
հըրդակցական ձայնի իրավուն-  
քով:

11. Թեկնածուները սովորական  
անդամակնար են մուծում տեղա-  
կան կուսակցական կոմիտեյի  
գանձարկղը:

III. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱ-  
ԿԵՐՊՉՈՎԱԿՈՒՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ  
ՄԱՍԻՆ

12. Կուսակցության կազմա-  
կերպչական կառուցվածքի ղեկա-  
վար սկզբունքը դեմոկրատական  
կենտրոնացումն է (централиза-  
ция).

13. Կուսակցությունը կառուց-  
վում է դեմոկրատական կենտրո-  
նացման հիմունքներով, ըստ տեր-  
րիտորիալ հատկանշի. վորեն  
շրջանի սպասարկող կազմակեր-  
պությունը բարձրագույն է հա-

մարգում բոլոր այն կազմակերպությունների նկատմամբ, վորոնք սպասարկում են տվյալ շրջանի այս կամ այն մասին:

14. Կուսակցական բոլոր կազմակերպությունները տեղական հարցերը վճռելու մեջ ինքնավար են (автономны).

15. Յուրաքանչյուր կազմակերպության բարձրագույն ղեկավար մարմինը հանդիսանում է ընդհանուր ժողովը, կոնֆերանսը կամ համագումարը:

16. Ընդհանուր ժողովը, կոնֆերանսը կամ համագումարն ընտրում են կոմիտե, վորը հանդիսանում են ըրանց գործադիր մարմինը և ղեկավարում են տեղական կազմակերպության ամբողջ ընթացիկ աշխատանքը:

17. Կուսակցության կազմակերպչական սխեման հետևյալն ե.

ա) ԽՍՀՄ տերրիտորիա — Համամիութենական Համագումար — կենտրոն:

բ) Մարզեր, (область) հանրապետություններ, նահանգներ — մարզային (յերկրային) կոնֆերանսներ, ազգային կոմիտսակցությունների համագումարներ, նահանգական կոնֆերանսներ մարզային (յերկրային) կոմիտեներ, ազգային կոմիտսակցությունների կենտրոններ, նահանգական կոմիտեներ:

գ) Շրջաններ (округа) գավառներ — շրջանային, գավառական կոնֆերանսներ — շրջանային, գավառային կոմիտեներ:

դ) Վոլոստներ (ռայոններ) — վոլոստային (ռայոնական) կոնֆերանսներ — վոլոստային (ռայոնական) կոմիտեներ:

ե) Զեռնարկություններ, դյու-

զեր, կարմիր-բանակային զորամասեր, հիմնարկություններ — քջիջների ընդհանուր ժողովներ — քջիջների բյուրոներ:

18. Յենթարկման, հաշվետվության, կուսակցական բոլոր վորոշումների ընթացքի և վիճարկման (օսպարি঵ան) կարգը (բարձրադաս ինստանցիայից դեպի ստորադասը) հետևյալն ե. համամիութենական համագումար, կենտկոմ, մարզային (յերկրային) կոնֆերանս մարզային (յերկրային) կոմիտե, ազգային կոմիտակցությունների կոնֆերանս ազգային կոմկուսակցությունների գենտիլիութեան կոմիտե, նահանգական կոնֆերանս և այլն:

19. Կուսակցական աշխատանքի առանձին ձևերի համար կաղմարկում են հատուկ բաժիններ: Բաժինները գործում են կոմիտենե-

րին կից և անմիջորեն յենթարկվում են նրանց: Բաժինների կազմակերպման կարգը սահմանվում ե կենտկոմի հատուկ հրահանգներով:

20. Յուրաքանչյուր կազմակերպություն վերջնականապես հաստատվելուց հետո իրավունք է ստանում իր կնիքն ունենալու, սակայն միայն համապատասխան բարձրագույն կուսակցական մարմնի թույլտվությամբ:

VI. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

21. Կուսակցության գերագույն մարմինը համագումարն ե: Հերթական համագումարները հրավիրվում են տարին մեկ անգամ:<sup>1)</sup>

1) Տես «Համեկը» 15-րդ համագումարի վորոշումը՝ կազմակերպչական առանձին հարցերի մասին» ուսւա, հրատ. եջ՝ 78:

Արտակարգ համագումարները հը-  
քավիրում ե կենտրոնական կո-  
միտեն սեփական նախաձեռնու-  
թյամբ կամ կուսակցական վեր-  
ջին համագումարում ներկայաց-  
ված անդամների՝ ընդհանուր թվի  
<sup>1/3</sup> ից վոչ պակասի պահանջով։  
Կուսակցակցական համագումար  
հրավիրելու մասին և համագու-  
մարի որակարգը հայտարարվում  
է վոչ ուշ, քան մինչև մեկ և կես  
ամիս համագումարից առաջ։ Ար-  
տակարգ համագումարը հրավիր-  
վում է յերկու ամսվա ընթաց-  
քում։

Համագումարն որինական ե հա-  
մարվում, յեթե նրանում ներկա-  
յացված են կուսակցության վեր-  
ջին հերթական համագումարում  
ներկայացված բոլոր կուսանդամ-  
ների կիսից վոչ պակաս կուսան-  
դամներ։

Կուսակցության համագումարի  
ներկայացուցչական նորմաները  
սահմանում ե կենտրոնական կո-  
միտեն։

22. Յեթե 21-րդ կետում նշած  
ժամանակամիջոցում կենտրոնա-  
կան կոմիտեն արտակարգ համա-  
գումար չհրավիրի՝ արտակարգ  
համագումար պահանջող կազմա-  
կերպություններն իրավունք ու-  
նեն կազմելու կազմակերպչական  
կոմիտե, վորը համագումար հրա-  
վիրելու հարցում ոգտվում ե  
կենտրոնական կոմիտեյի իրա-  
վունքներով։

23. Համագումարը—ա) լսում և  
հաստատում ե կենտրոնական կո-  
միտեյի, կենտրոնական վերա-  
հսկիչ հանձնաժողովի, կենտրո-  
նական վերստուգիչ հանձնաժո-  
ղովի և այլ կենտրոնական հիմ-  
նարկների հաշվետվությունները։

բ) վերաքննում և փոփոխում ե  
կուսակցության ծրագիրն ու կա-  
նոնադրությունը, գ) վորոշում և  
կուսակցության տակտիկական  
գիծն ընթացիկ հարցերի վերա-  
բերմամբ, դ) ընտրում ե կենտ-  
րոնական կոմիտե, կենտրոնական  
վերահսկիչ հանձնաժողով և կենտ-  
րոնական վերստուգիչ հանձնա-  
ժողով և այլն:

24. կենտրոնական կոմիտեն  
ընտրվում ե համագումարի սահ-  
մանած կազմով: կենտրոնական  
կոմիտեյի անդամների հեռանա-  
լու դեպքում նրա կազմը լրաց-  
վում է համագումարի ընտրած  
թեկնածուներից՝ համագումարի  
վորոշած կարգով:

25. կենտրոնական կոմիտեն  
համագումարից-համագումար դե-  
կավարում է կուսակցության ամ-  
բողջ աշխատանքը, կուսակցու-

թյան ներկայացուցիչն ե հանդի-  
սանում ուրիշ կուսակցությունների, կազմակերպությունների  
և հիմնարկների հետ հարաբերու-  
թյան մեջ մտնելիս, կազմակեր-  
պում ե կուսակցության զանա-  
գան հիմնարկներ և դեկավարում  
ե նրանց գործունեյությունը,  
նշանակում ե իր հմկողության  
տակ աշխատող կենտրոնական  
որգանների խմբագրությունները  
և հաստատում տեղական խոշոր  
կազմակերպությունների կուսակ-  
ցական որգանների խմբագիրնե-  
րին, կազմակերպում և վարում ե  
հասարակական նշանակություն  
ունեցող ձեռնարկությունները,  
բաշխում ե կուսակցության ու-  
ժերն ու միջոցները և վարում ե  
կենտրոնական դանձարկղի գոր-  
ծերը:

կենտրոնական կոմիտեն կու-

սակցական ֆրակցիաների միջոցով ուղղություն ե տալիս խորհրդային և հասարակական կենտրոնական կազմակերպությունների աշխատանքներին:

Կենտրոնական կոմիտեն առնվազն յերկու ամիսը մեկ անգամ ունենում է մեկ պլենար նիստ: Կենտրոնական կոմիտեն նիստերը կենտրոնական պլենարը նիստերին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով:

26. Կենտրոնական կոմիտեն կազմակերպում ե. Քաղաքական աշխատանքի համար—Քաղաքական Բյուրո, կազմակերպչական աշխատանքի ընդհանուր ղեկավարության համար—կազմակերպչական Բյուրո և կազմակերպչական ու գործադրական ընույթ կրող ընթացիկ աշխատանքների համար—Քարտուղարություն:

27. Կուսակցական մի համագումարից մինչև մյուսը՝ կենտրոնական կոմիտեն հրավիրում ե համամիութենական կուսակցական մեկ կոնֆերանս՝ տեղական կուսակցությունների ներկայացուցիչներից:

28. Կենտրոնական կոմիտեն իր աշխատանքների մասին պարբերաբար տեղեկացնում ե կուսակցական կազմակերպություններին:

29. Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովն ընտրվում է կուսակցության համագումարի վորոշած կազմով:

30. Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովն ընտրվում է կուսակցության համագումարի վորոշած կազմով, ընտրվողների կուսակցական սուածը 10 տարուց պակաս չպետք ելինի:

կենտրոնական վերստուգիչ  
հանձնաժողովն ստուգում ե—ա)  
գործերի ընթացքի արագությու-  
նըն ու ճշտությունը կուսակցու-  
թյան կենտրոնական մարմիննե-  
րում և Համկ(բ)կեկ Քարտուղա-  
րության ապարատի կանոնավո-  
րությունը Համկ(բ)կեկ գանձարկ  
դըն ու ձեռնարկությունները:

### V. ՄԾՐՁԱՑԻՆ (ՅԵՐԿՐՍՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

31. Կուսակցական կազմակեր-  
պությունները Համկ(բ)կեկ Կթույլ-  
տըվությամբ կարող են միանալ  
և կազմել մարդային (յերկրային)  
միավորումներ: Մարդի (յերկրի)  
սահմանները վորոշում ե մարդա-  
յին (յերկրային) կոնֆերանսը և  
համատառում ե կենտկոմը:

32. ԽՍՀՄ և ՌՍՖԽՀ ազգային

հանրապետությունների (և մար-  
զերի) տերրիտորիան սպասար-  
կող կուսակցական կազմակեր-  
պությունները հավասարեցվում  
են կուսակցության մարդային  
(կամ նահանգական) կազմակեր-  
պություններին, այսինքն՝ ամ-  
բողջովին յենթարկվում են Համ-  
կ(բ)կ կենտկոմին:

33. Մարդային (յերկրային) կո-  
միտեն (կամ ազգային կոմունիս-  
տական կուսակցության կենտ-  
կոմն ընտրվում ե մարդային (յերկ-  
րային) կոնֆերանսում (կամ ազ-  
գային կոմկուսի համագումա-  
րում):

